№ 148 ՈՒՐԲԱԹ, 10 ՅՈՒԼԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ, 10 ՅՈՒԼԻՍԻ № 148

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

BIBLIOTHEQUE [illegible] VENISE S. LAZARE

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յուլիսի 7-ին ծովամերձ շրջանում Թիւրքերը փորձեցին յարձակման դիմել գիշերով Մաղարա-դաղի մօտ, բայց ապարդիւն։

Օլթիի ուղղութեամբ հրացանաձգութիւն է Թէվայի և Ախալի շրջանում։

Մուշի ուղղութեամբ յուլիսի 6-ին մեր զօրքերը ջարդեցին Օգլնչարի մօտ Եփրատի ձախ ափն անցած Թիւրքերին։ Մեր զօրքերը հետապնդում են պարտված Թիւրքերին Բիթլիսի և Մուշի ուղղութեամբ. մեր զօրամասերից մինը ձեռք ձգեց սայլեր և մեծ թւով անասուն։ Թիւրքերը հապճեպ նահանջում են, ձգելով ռազմամթերքները։

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ։

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԱՏՈՐՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 յուլիսի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Մեր ականանաւերը երևան հանելով Թիւրքական 50 առագաստանաւ, որոնք դիմում էին դէպի Տրապիզոն զանազան ռազմամթերքով Անդրճորոխեան զօրքի համար, յարձակում գործեցին և ոչնչացրին նրանց։ Նաւաստիները գերի ընկան։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 յուլիսի

ՍՕԼՈՒՆ.—Այվալըքի Թիւրքական իշխանութիւնները հրաման ստացան երկրի խորքն աքսորել բոլոր կանանց և երեխաներին, թւով մօտ 12,000 հոգու։ Այս հրամանը սկիզբն է այն ծրագրի իրագործման, որպիսին ընդունվել է երիտասարդ Թիւրքերի վերջին նիստում՝ ոյժով մահմեդականացնել յոյն կանանց և երեխաներին։

(Լրագիրներից)

◆ Կ. Պօլսում հրաման է արձակված ամբողջ ազգաբնակութեանը դուրս գալ յուլիսի 17-ին աշխատելու՝ քաղաքը ամրացնելու վրա։ Հրամանը իրարանցում է ձգել ազգաբնակութեան մէջ։

◆ Վճռելով՝ ինչ էլ որ լինի կանգնեցնել մեր առաջխաղացումը դէպի Մուշ, Թիւրքերը յունիսի վերջերին և յուլիսի սկիզբներին կենտրոնացրին Խիզան-սու-Ջէվան-Կոպ-Կարմուրջ զօրաճակատում մի զօրաբանակից աւելի, բաղկացած հետևեալ մասերից. 1) Խալիլ-բէյի դիվիզիան՝ լրացրված նոր զօրախմբերով, 2) Անգօրայի դիվիզիան, 3) 33-րդ և 34-րդ դիվիզիաներից, 4) կանոնաւոր հեծելազունդ, 5) սափօրների բատալիօն և 6) 6000—7000 քիւրդերից։ Անհամեմատ յամառ դիմադրութիւն մեր առաջխաղացմանը եղաւ Կոպի մօտ, որի հոսում բանակած էին գլխաւոր պահեստազնդերը։

Չը նայած որ Թիւրքերի թիւը անհամեմատ շատ էր մեր թւից և որ նրանք գրաւել էին շատ լաւ դիրքեր, բայց և այնպէս կանգնեցնել մեր առաջխաղացումը նրանց չաջողվեց, և այժմ, Պրխուսի, Տօրտօնի և Կոպի մօտ պարտվելուց յետոյ, նրանք անկարգ ետ են քաշվում դէպի հարաւ, այսինքն դէպի Բիթլիս և դէպի Մուշ։

◆ «Р. В.»-ն գրում է, որ Կրետեյում կռիւները ստացել են չափազանց լարված բնոյթ։ Թիւրքերը օրհասական դիմադրութիւն են ցոյց տալիս։

◆ Տեսնելով որ անկարելի է դիմադրել դաշնակից զօրքերին, որոնք սպառնում են ճեղքել Թիւրքերի զօրագիծը Գալիպօլի թերակղզում, Թիւրք զօրքը, ֆօն-դէր Գօլց-փաշայի խորհրդով, հետզհետէ ետ է քաշվում։

◆ Սօֆիայում բնակվող հայերը միջնորդել են ուր հարկն է, որպէսզի Բուլղարիան յանձն առնէ հայերի պաշտպանութիւնը Թիւրքիայում։

◆ Լօնդօնից հեռագրում են. «Յուլիսի 7-ի երեկոյեան լրագիրները ստացան ճշգրիտ տեղեկութիւններ այն մասին, որ Աւստրիան և Գերմանիան վերջնագրի ձևով պահանջել են Ռումինիայից թոյլ տալ անարգել ռազմամթերք փոխադրել Թիւրքիայի համար։ Սակայն Ռումինիան այս անգամ մերժել է կտրուկ կերպով։ Մեծ թւով վագօններ պատերազմական իրերով բռնված են Ռումինիայի սահմանում։ Հաղորդում են, որ Աւստրիան և Գերմանիան Ռումինիային ահաբեկելու համար զօրքեր են ուղարկելու դէպի ռումինական սահմանը»։

ՕԳՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Հայերուս, մանաւանդ Թիւրքահայերուս համար՝ ընդհանրական օգնութիւններ հասցնելը տեսակ մը ինքնաբերական սովորութիւն դարձած է։ Ինչպէս որ ձմեռէն վերջ գարուն կուգայ՝ ամեն տարի Թիւրքահայութեան մասնակի կամ ընդհանուր ջարդերէն վերջ վերապրեցուցիչ օգնութիւնները սկսած են։

Այս իրողութիւնը մեր ազգային հոգեբանական կեանքին մէջ անտարակոյս ունեցած է իր որոշ ազդեցութիւնը։

Մայր հայրենիքի (Ռուս. Հայաստանի) ցաւատանջ հայութիւնը՝ յաճախ զրկուած ու սոված՝ սպասած է եղբայրական օժանդակութեանց, և Արարատի ու հեռաւոր գաղթավայրերու հայութիւնը, յուզուած՝ Թիւրքահայութեան ծով կարիքէն, հասցուցած է կրցածին չափ իր եղբայրական օգնութիւնները։

Օտարէն աւելի մենք մեզի է որ օգնած ենք. օգնութիւն ընդունելու և օգնութիւն հասցնելու ընկերական կեանքն է, զոր թէ լացած և թէ ապրած ենք։

Ահա այս պահուն՝ նոյն աղեխարշ կեանքին ծփանքներուն մէջ ենք։ Գանգէսի հովիտներէն մինչև Ատլանտեանի միւս եզերքները, Նեղոսի ափերէն մինչև սառուցեալ ծովերը*) ցրիւ եկած հայութիւնը, բոլոր ազգերուն պէս նախ կը տապկուի ընդհանուր պատերազմի ցաւերովը, սակայն և ոչ մէկ ցաւ կը հաւասարի անոր սրտի խոցունկ մորմոքումներուն, որոնցմով կը տանջուի իր մեծամասնութեան (Թիւրքահայութեան) անելանելի կացութեան մէջը մնալուն համար...։

Այդ ընդհանուր վիճակը առաջ բերած է անշուշտ՝ ներկայ օգնութեան հասցնելու ազնիւ զգացումները և բարեգործ մարմինները։

Բնական է, որ հայերուս իսկ կեանքի, ազգային կեանքի տեսական պայմաններէն մին եղած է՝ օգնել և օգնուիլ։

Այս պարագան ցարդ մեզի ուսուցած պիտի ըլլար նաև շատ դրական ու շօշափելի եղանակաւ օգնութիւն հասցնելու կերպը գիտնալ անշուշտ։

Այժմ օգնութիւններ կարելի է միայն հասցնել՝ Ալաշկերտ, դէպի Մանազկերտ և ապա Վան։ Ցիշեալ փրկարար ձեռնարկութիւնները ով որ մօտէն դիտած է, «ազնիւ գործ է» կոչած է. սակայն նոյն ազնիւ գործը աւելի պտղաբեր՝ և ապագային լայն շրջանակներու վերաշինման համար թափուած ջանքերուն անջատաղութիւնը և ոչ մէկ դիտողի մխիթարական եկած է, մանաւանդ որ վերոյիշեալ կարօտեալ վայրերը շատ պէտք ունին՝ հեղինակաւոր և փորձառու օգնութեան բաշխողներու, որոնց շրջուն գործունէութիւնը բարոյական աւելի զօրեղ ներգործութիւն պիտի ընէ, քան նիւթականը։

1895—1908-ի դժբաղդ օրերուն մէջ մենք ականատես եղանք ամերիկացի և եւրոպացի բարերարներու գործունէութեանց՝ մեր ցաւատանջ մայր հայրենիքին մէջ։ Կազմակերպութեանց՝ գլխաւոր պատկառազդու անձերը իրենք եղան նախ առաջին յանձնաժողովին անդամները, որ շրջեցան նոյն ժամանակուան մեր ամբողջ քարուքանդ աւերակները։ Ցուցակագրեցին՝ հարցափորձեցին անձամբ եղանակաւ, պտտեցան ամեն մէկ գիւղն ու գիւղակը, լուսանկարեցին, դիւրատար և անդիւրատար տեղական պայմանները ուսումնասիրեցին, աչքերնուն հանդիպած անմիջական կարօտեալներուն ուղղակի իրենք օգնեցին։ Ասկէ յետոյ՝ մէկ բժշկական շրջուն խումբ և մէկ նպաստ բաժնող խումբ իւրաքանչիւր շրջանակի համար հմտաբար հրահանգուած՝ գործի ելան։ Նոյն խումբերը 1—2 ամիսը անգամ մը գործի կը ձեռնարկէին և իրենց գործունէութիւնը օրը օրին կը տեղեկագրէին կեդրոնին։

Այսպիսով տակաւ բարելաւուողը արդէն ինքնին կը ջնջուէր նպաստից տոմարէն։

Կերևի թէ՝ կաթողիկոսարանին և անոր հովանաւորութեամբ հիմնուած մարմիններուն՝ թոյլատու չեղաւ դեռ պատերազմը, որ գործէին աւելի հիմնաւոր, աւելի լուրջ և խնայած ոյժերով։ Սակայն վստահ ըլլանք ազգովին, որ մեր եղբայրներուն օգնութեան հասնելու կենսական հարցը արդէն մշակուած է և կը մշակուի անշուշտ, ողջ հմտութեամբ ու այնպէս կը գործադրուի՝ ազգ. ընդհանուր վարչութեանց կողմէ ամենուս բաղձալի օգնելու կերպը...

Ցիշեալ կերպը, մեր խոնարհ կարծիքով, կարելի էր ի գործ դնել անձնուիրութեան հետ տոկուն կամք և միտք ունեցող խմբակներու ձեռքով, բոլորովին անկաշառ և անկողմնակալ շարժիչ ոյժի մը ձեռքով, որ արդէն բաւական ուշացած է կարծեմ։

Գաղթական

---

*) Այստեղ չեմ կրնար չյիշել 3 օր առաջ Ամերիկայէն՝ Հիւս. Սառուցեալ ովկիանոսի գծով եկած մեր խարբերդցի և բալուցի մօտ 500-ի չափ արհեստաւոր կամաւորները, որոնք շարունակ ցերեկի մէջ նաւած էին մօտ 2 ամիս և յոգնութեան նշանն իսկ ցոյց չէին տար։

ԽՈՇՈՐ ԱՆՑՔԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ընդհանուր մարդկութիւնը ներկայումս ապրում է պատմական խոշոր անցքերի շրջանում։ Արևելքից արևմուտք, հիւսիսից հարաւ ազգեր և ժողովուրդներ էլեկտրականապէս լարված ջղայնացած, առանց ցաւ անգամ զգալու բաղխվել են իրար և մաքառում են ճնշված փոքրիկ ազգերի փրկութեան համար։ Դա առանձնապէս մեծ նշանակութիւն ունի հայ հասարակութեան համար, որը դարերի ընթացքում ճնշվել, արիւնքամ է եղել Թիւրք բռնակալութեան գախօնի տակ, որը կոշմարի նման միշտ ծանրացել է Թիւրքահայ ժողովրդի գլխին, «օր ու արև» չը տալով այդ մարտիրոս ժողովրդին, որի կուլտուրական հայեացքները, նրա ազգային առաջխաղացութիւնը Եւրոպայի ուշադրութիւնն է գրաւել միշտ և ամեն ժամանակ։

Այո, այժմեան ազատագրական մեծ պատերազմը առանձնապէս մեծ կարևորութիւն ունի հայ հասարակութեան համար մանաւանդ այն տեսակէտից, որ ռուս կառավարութիւնը իր միսսիան է համարել վերջնականապէս ջախջախել Թիւրք բռնակալութիւնը, խորտակել սուլթանների այդ անարգ գախօնը և ազատել Թիւրքահայ ժողովուրդը դարերի հալածանքից... Դա իսկապէս խոշոր անցքերից ամենախոշորագոյնն է, որի համար հայ ժողովուրդը նոյնպէս իր ամբողջ գիտակցութիւնն է հրապարակ բերել և նետվել այդ խոշոր անցքերի շրջանը՝ իր արիւնը խառնելով ռուս զաւակների արեանը՝ ձեռք բերելու սրբազան ազատագրական դափնին։

Այժմ, երբ արդէն մարդկային ստեղծագործական աշխատանքն է կանգ առել, երբ շինարարական ամեն մի գործ քարացած է մնացել, երբ բոլէապէս մեծաշէն քաղաքներ ու աւաններ փլատակվում, հող ու մոխիր են դառնում և երբ մարդկութեան ձեռքի թանգարժէք արդիւնքը կուլ է գնում նիւթապաշտ ազգերի անզուսպ քմահաճոյքներին, այժմ այդ բոլորը վկայում են, որ արդարև սա աներևակայելի մի դարաշրջան է, ուր մարդիկ իրանց ակտիվ մասնակցութեան շնորհիւ, իրանց արեան գնով միայն վայելելու են իրենց մաքառման արդիւնքները։

Այժմ արդէն մեր ձեռքումն է գտնվում Թիւրքաց Հայաստանի մի մասը. Վասպուրականի մայրաքաղաք Վանը, պատմական Ադամակերտը, Ոստանը և այլն արդէն գրաւված են հայ և ռուս քաջերով... Արդէն իրականութիւն են ստանում մեր մեծ վիպասան Րաֆֆիի «Կայծերի» պատմական անցքերը, «Խենթի» երազանքը... Դուդուկչեանը հանդէս է գալիս իր ազատագրական ամբողջ միսսիայով... Լալայի գերեզմանի վրա նիրհող Վարդանն այժմ արթնացած տեսնում է իր աչքով իր երազների ճշգրտութիւնը։ Շուտով շոգեկառքը կը ճեղքի Թիւրքաց Հայաստանի կուսական սիրտը, և Լալան կը մատուցանէ իր մերձաւորներին իր «առաջին յօդուածը» հայկական մի լրագրում տպված...

Դրանք իսկապէս պատմական աներևակայելի մեծ անցքեր են, որոնք շոյում են հայի ազատասէր սիրտը, փայփայում ու ոգևորում են նրա ազգային զգացմունքները... Սակայն քանի գնում՝ այնքան բարդանում և խոշորանում են անցքերը և աւելի ուշագրաւ դառնում բոլոր ազատասէրների համար։ Մաղթենք, ուրեմն, որ աւելի ոգևորված մնան հայ մարտիկները և իրանց ազատագրական փառքը վայելեն այդ պատմական խոշոր անցքերի շրջանում։

Նոր-Բայազէտ Գ. Սինանեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգա-Շավել շրջանում յուլիսի 7-ին ռազմական գործողութիւնները տեղի էին ունենում Միտավայից դէպի արևմուտք և Եախշեի գիւղի ճանապարհների վրա։

Նարեվի վրա թշնամին ռմբակոծեց Օստրոլենկան և փորձեց առաջանալ Ռոժանի և Պուլտուսկի միջև։

Վիսլայի ձախ ափում յուլիսի 7-ին թշնամին ապարդիւն յարձակում գործեց Եվոլին Գնէվաշեվ ուղղութեամբ։

Լիւբլինի ուղղութեամբ մենք կանգնեցրինք թշնամու առաջխաղացումը Խօդէլ-Պիասկի զօրաճակատում։

Վէպրժի երկու ափերում, Սուխօդօլի գիւղի մօտ և Բէխովէց աւանի ուղղութեամբ յուլիսի 7-ին տեղի էր ունենում յամառ, մինչև ուշ երեկոյ շարունակվող, կռիւ։ Գերմանացիք, վանվելով մի քանի տեղ, կրեցին զգալի կորուստներ։

Վօյսլավիցէ-Գրուբէշով զօրաճակատում յուլիսի 7-ին նոյնպէս կռիւ սկսվեց և տեղի ունեցաւ թնդանօթաձգութիւն։

Բուգի վրա, Լիտօմլյ-Սօկալ-Պօդսուրժիցա ռազմավայրում մեր զօրքերը ետ մղեցին աջ ափն անցած թշնամու զօրամասերին։ Ցամառ կռուի մէջ մենք գերեցինք 1000 հոգի։

Մնացած ռազմաճակատներում խոշոր ճակատամարտեր չեղան։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 յուլիսի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում՝ Սուշէի շուրջ կատաղի ռմբակոծութեան ժամանակ հետևակ զօրագնդերը չէին մասնակցում։ Գերմանացիք արձակեցին Արրասի դէմ 60 ռումբ։ Արգոններում կռիւ էր ձեռքի ռումբերով։ Մասսի աջ ափում գերմանացիք ցերեկով ձեռնարկեցին երկու ուժեղ յարձակման մեր դիրքերի դէմ Սոնվօ ձորի հարաւային զառիվայրում այդ յարձակումներն աջողութեամբ վանվեցին։ Ցետոյ թշնամին ռմբակոծեց մեր խրամատները և մանր ոյժերով գործեց մի քանի յարձակում, որոնք վանվեցին գերմանացիների համար խոշոր կորուստներով։

Մեր աէրօպլաններից մինը գնդակացիրային կրակով ցած գլորեց թշնամու աէրօպլանին, որ այրվելով ընկաւ գերմանացիների զօրագիծը Սուասոնի մօտ։

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Բէլգիայում թշնամին գիշերվայ ընթացքում բաւական ուժեղ ռմբակոծեց մեր խրամատները Սէն-Ժօրժի մօտ, նաև Բուսինգէ գիւղն ու եկեղեցին։ Արտուայում գերմանացիք կէսգիշերին յարձակում գործեցին Սուշէի մօտ, բայց անաջող։ Ապրէմօնի անտառում կռիւ էր ձեռքի ռումբերով։ Լօթարինգիայում տեղի ունեցան մեզ համար նպաստաւոր մի քանի ընդհարումներ։

Արտուայում թնդանօթային կռիւը շարունակվում է։ Րէյմսի կատաղի ռմբակոծութեան ժամանակ սպանվել են մի քանի խաղաղ բնակիչ։ Մասսի և Մօզէլի միջև, Էպարժում, Ֆէանգէի շրջանում և Լեպրէտրի անտառի մօտ տաք թնդանօթաձգութիւն է։

Մեր դիրիժաբլներից մինը լոյս յուլիսի 7-ի գիշերը 23 ռումբ նետեց Վինէլ-լէ-Կատօնշատէլի կայարանի և ռազմամթերքի պահեստի վրա և վերադարձաւ անվնաս։ Են գետի հովտում նոյնպէս տաք թնդանօթային կռիւ է։ Սուասոնը ռմբակոծվեց։

Մեր 4 օդագնաց 48 ռումբ նետեցին Շալէրանժի կայարանի վրա։ 5 աէրօպլանից ռմբակոծվեց Կոլմարի կայարանը։

ԼՕՆԴՕՆ.—Ֆելդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է.

Անգլիական զօրքերը երէկ գրաւեցին 15 յարդ թշնամու խրամատ Գօօժից դէպի արևմուտք և Իպրից դէպի արևելք։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 յուլիսի

ՀՌՕՄ.—Ծովային գեներալ-շտաբը յայտնում է.

Երբ մեր ռազմանաւերը հեռացան, նրանք ենթարկվեցին սուզանաւերի յարձակման։ «Գարիբալդին», աջողութեամբ խուսափելով առաջին յարձակումից, յետոյ ջրասուզվեց նրա վրա նետված ականից։ Նաւաստիները լիակատար հանգստութիւն պահպանեցին և ծովն ընկնելուց առաջ մի քանի անգամ աղաղակում էին «Կեցցէ Թագաւորը»։ Նաւաստիների մեծ մասն ազատվեց։

Օդային գործողութիւններից պէտք է մատնանշել յունիսի 26-ին կատարված ռմբակոծութիւնը Տրիէստում։ Մեր դիրիժաբլի նետած ռումբերից հրդեհ ծագեց, որի բոցը տարածվեց 49 կիլօմետր։ Յուլիսի 1-ին մեր հիդրօպլանից ռումբեր նետվեցին Ֆագանոյում թշնամու զօրամասերի վրա. երկու ուրիշ հիդրօպլան ռումբեր նետեցին Սալվօրէ փարոսի մօտի մարտկոցների վրա։ Յուլիսի 3-ին մեր դիրիժաբլը աջողութեամբ ռմբակոծեց Գրենկանօյի երկաթուղային կայարանը և այլ երկաթուղագծեր Տրիէստ-Մօնֆալկօնէ ուղղութեամբ։ Յուլիսի 4-ին թշնամու հիդրօպլաններից մինը ընկաւ մեր ձեռքը։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակը յայտնում է.

Իզօնցօյի ամբողջ զօրաճակատում երէկ մեր առաջխաղացումը շարունակվեց աջողութեամբ, մանաւանդ Կարսօ սարահարթում։ Օրվայ վերջում մեր զօրքերը ձեռք ձգեցին մի քանի խրամատ և 500 գերի։ Չը նայած յոգնածութեան, զօրքերը կարողացան ամրանալ գրաւած դիրքերում և ամբողջ գիշեր վանում էին թշնամու հակայարձակումները։ Կռիւը շարունակվում է։

«Ջիօռնալէ-դ'Իտալիան» ճշգում է, որ իտալական զօրքերը մեծ աջողութեամբ առաջանում են Իզօնցօ շրջանում։ Աւստրիական զօրքերի կորուստները շատ մեծ են։ Իտալացիները վանում են աւստրիացիներին և ձեռք ձգում մեծ քանակութեամբ գնդակացիրներ ու զէնք։

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱԲԱՆԱԿԻ ՇՏԱԲՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Այսօր, Գերագոյն Զօրահրամանատարի շտաբում, Նորին Կայսերական Բարձրութեան, նրա շտաբի զօրամասերի և շատ պաշտօնեաների ներկայութեամբ կատարվեց մաղթանք, որից յետոյ Գերագոյն Զօրահրամանատարը դիմեց զօրքերին և նաւատորմին հետևեալ հրամանով.

«Այսօր, Կազանի Մայր Աստուածածնի սրբապատկերի տօնի օրը, Թագաւոր Կայսրի կամքով և սինօդի կարգադրութեամբ ամբողջ Ռուսաստանում աղօթքներ վերառաքվեցին առ ս. Աստուածածինը, որպէսզի Նա խնդրամատոյց լինի Տէր Աստուծուն՝ յաղթութիւն պարգևելու ռուս զօրքին: Խորապէս հաւատում եմ, որ Ցարի աղօթքը՝ Նրա հետ միացած ժողովրդի աղօթքին միախառնված՝ լսելի կը լինի Աստուծուն: Համայն Ռուսաստանը միացել է և իր բովանդակ ոյժերը ձուլել է ի մի՝ զօրքին անհրաժեշտ պիտոյքները հայթայթելու համար ընդդէմ Թշնամու: Յիշեցէք, Գերագոյն Պետ Թագաւոր Կայսրի Ինքնակալ կամքով ինձ վստահացված հերոս զօրքեր և նաւատորմ, որ Ցարը և Նրա հետ միասին ամբողջ Ռուսաստանը աղօթքով ու աշխատանքով օգնում են մեզ. համակվենք այդ գիտակցութեամբ և մեր արիութեամբ ու նոր քաջութիւններով ցոյց տանք մեր շնորհակալութիւնը: Մեզ հետ է Աստուած և Նրա Ամենակարող զօրութիւնը, իսկ մեր հաւատը յաղթութեան գրաւականն է»:

Այսօր, իբրև բացառութիւն սահմանված կարգից, Գերագոյն Զօրահրամանատարի շտաբն եկաւ նախաթոռ Մոսկվայի պատգամաւորութիւնը՝ յանձին քաղաքագլուխ Միխայիլ Վասիլեւիչ Չէլնօկովի և ձայնաւոր Միխայիլ Միխայլովիչ Նովիկովի: Պատգամաւորութիւնը սկզբում գնաց շտաբի եկեղեցին, ուր մաղթանք էր կատարվում, այնտեղից վերադարձաւ և ընդունվեց Մեծ Իշխանից: Քաղաքագլուխ Չէլնօկովը մատուցեց սրբապատկեր և հաղորդեց Մոսկվայի ողջոյնը: Գերագոյն Զօրահրամանատարը Իր և մեր հերոս զօրքի կողմից շնորհակալութիւն յայտնեց նախաթոռ մայրաքաղաքի ներկայացուցիչներին, որի սրտին մշտապէս մօտ է մեր զօրքի շահերը: Դրանից յետոյ պատգամաւորութիւնը հրաւիրվեց նախաճաշի:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 յուլիսի

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ.—Ստորտինգին ներկայացվեց կառավարական օրինագիծ՝ իրաւունք տալու պետութեան գնել հաց ու ալիւր: Պատճառաբանելով օրինագիծը, երկրագործութեան մինիստրութիւնը մատնանշում է է այն անհրաժեշտութիւնը, թէ պետութիւնը պէտք է իր ձեռքն առնէ հացի վաճառումն ամբողջ երկրում: Զեկուցանողը յայտնեց, որ կառավարութիւնն օրինագիծ է ներկայացնելու երկիրը մթերքներով ապահովելու մասին:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գերմանական կառավարութիւնը համաձայնեց, որպէսզի յատկապէս Շվէցիայի համար արտահանվի Գերմանիայից շվեդական արդիւնաբերութեան համար անհրաժեշտ նիւթեր, ի թիւս որոց 10 միլիոն կռոնի քարածուխ, 2 միլիոն կռոնի անելինեան ներկ, ցինկ, դեղօրայք և այլ քիմիական նիւթեր:

Վիէննայից պաշտօնապէս հաղորդում են, որ յուլիսից սեպտեմբեր բժշկական քննութեան են ենթարկվելու 1865—1872 թ. թ. լանդշտուրմիստները:

ՍՕՖԻԱ.—«Миръ»-ի ասելով, իշխան Հօհենլօէն Սօֆիա եկաւ յատուկ միսսիայով: Նա յայտնում է, որ Բուլղարիան պատերազմի մէջ կարող է մեծ դեր խաղալ: Աւստրօ-Ունգարիան չի զիջի Սերբիային, մինչև Բուլղարիան վերջնականապէս չորոշէ իր անելիքը: Իշխանը հաւատացնում էր, որ եթէ Բուլղարիան հանդէս գայ Սերբիայի դէմ, Ռումինիան արգելքներ չի դնի:

«ДНЕВНИКЪ» լրագիրը ճշգում է, որ իշխան Հօհենլօէն մեկնում է յատուկ յանձնարարութեամբ՝ աջակցելու Թիւրք-բուլղարական համաձայնութեան կնքելուն ամենակարճ ժամանակամիջոցում:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Պաշտօնական «Վիկտորուլը» կտրուկ կերպով հերքում է «Էպօխա» լրագրի այն տեղեկութիւնը, թէ երբ գերմանական ինժեներներ և օֆիցերներ անցնում են մեծ թւով Ռումինիայով դէպի Թիւրքիա, ըստ որում նրանց բագաժը չի նայվում, որոնց մէջ գտնվում են փոխադրվելու անթոյլատրելի առարկաներ: «Վիկտորուլը» աւելացնում է, որ ռումին կառավարութիւնը չէ կարող արգելել անցնելու Ռումինիայով այն օտարազգիներին, որոնց անցագրերը կանոնաւոր են, իսկ բագաժը մանրազննին կերպով նայվում է:

ԼՈՆԴՈՆ.—Կառավարութիւնը պարլամենտին օրինագիծ ներկայացրեց 150 միլիոն ֆունտ ստեռլինգ լրացուցիչ գումար յատկացման մասին: Ասկվիտը բացատրեց, որ պատերազմի սկզբից ընդամենը յատկացված է 1012 միլիոն ֆունտ ստեռլինգ: Առաջին 17 օրում ծախսվեց 54 միլիոն, պատերազմական ծախքերը փետրվարի 16-ից մինչև յուլիսի 4-ը, հաշւելով դաշնակիցներին տրված փոխարինաբար գումարները, հաւասարվում են 277 միլիոն ֆունտ ստեռլինգի: Պատերազմական ծախքերը հաւանօրէն կաւելանան:

ՍՈԼՈՒՆ.—«Գէպպարիա» շոգենաւով եկան 8 ամերիկեան կարմիր խաչի 70 սանիտար 4 բժշկի հետ, որոնք մեկնում են Նիշ:

ՊԱՐԻԶ.—Ներքին գործերի մինիստրը պալատին օրինագիծ ներկայացրեց պատերազմի ժամանակ ոգելից ըմպելիքների գործածութիւնն ու վաճառումը սահմանափակելու մասին: Քաղաքապետներին իրաւունք է տրվում սահմանափակել և արգելել այդ խմիչքների վաճառումը այն բոլոր տեղերում, ուր կատարվում են աշխատանքներ ազգային պաշտպանութեան համար:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գեներալ-մայոր է դառնում Թիֆլիսի զինւորական կառավարիչ Ժգենտին:

Թագաւոր Կայսրի նախագահութեամբ այսօր տեղի ունեցաւ մինիստրների խորհրդի նիստը:

Գ. Հ. Գ. պետութեան բոլոր քաղաքներից հեռագիրներ ստացաւ այն մասին, որ բաց երկնքի տակ կատարվել են ժողովրդական հանդիսաւոր մաղթանքներ Թշնամու վրա յաղթութիւն պարգևելու համար:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Համբուրգից հաղորդում են, որ այրվեց Վեստֆալի մեծ գործարանը. վնասը 3 միլիոն մարկ է:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Զինւորական իշխանութեան կարգադրութեամբ պոստային և հեռագրական գրաքննիչ ատեաններում բոլոր պաշտօնները գրաւելու են կանայք ամսական 60 ռուբլի ռոճիկով:

◆ Բոլոր այն ուսանողները, որոնք կարող են իրանց ուսումն աւարտել այս աշնանը, ազատվում են զինւորական ծառայութեան կոչվելուց:

◆ Զինւորա-արդիւնաբերական կոմիտէների համագումարը սպասվում է յուլիսի 25-ին:

◆ Լուրերի համաձայն, կազմակերպվում է մինիստրութեան իրաւունքով ինքնուրոյն հաստատութիւն զօրքի պէտքերը հոգալու համար լայն լիազօրութիւններով: Պատուէրներ բաժանելը կը յանձնվի զինւորական մինիստրին զեմստվօների և քաղաքների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Կենտրոնական կոմիտէտը մնալու է իբրև օժանդակ կազմակերպութիւն:

◆ «Р. В.»-ում Օգլենինը նկատում է, որ մեր զօրքերը ստիպված եղան հեռանալ Բզուրա-Ռավկա զօրագիծը և ետ քաշվել դէպի Վիսլա և Վարշավա:

◆ Միխայլովսկին «Р. Сл.»-ում մատնանշում է, որ գերմանացիք մեր դէմ ստացել են նոր 18 զօրաբանակ:

◆ Մայրաքաղաքում կաբինէտի անդամների նոր փոփոխութիւնների մասին պտտվող խօսակցութիւնները չեն դադարում:

◆ Մոսկվայի զինւորա-արդիւնաբերական կոմիտէտին յատկացված է 5 միլիոն ռուբլի պետական գանձարանից քաղաքային և զեմստվոյին միութիւններին 5-ական միլիոն ռուբլի. տնայնագործական արդիւնաբերական կազմակերպութեան համար բաց է թողնված 8½ միլիոն ռուբլի:

◆ Մոսկվայի ոստիկանութեանը պատուիրված է բացատրել ռազմամթերք պատրաստող գործարանների բանւորներին, որ յօժարակամ աշխատանքից խուսափելը յանցանք է և թուլացնում է ռուսաց զօրքի ոյժը: Այդպիսի խուսափումների մասին տեղեկութիւն պէտք է տրվի դատախազին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական.

Պետական Հիմնական Օրէնքների 89-րդ յօդուածի հիման վրա հրամայում ենք՝ Պետական Խորհրդի և Պետական Դումայի պարապմունքները վերսկսել 1915 թ. յուլիսի 19-ին:

Կառավարիչ Սենատը չի յապաղի ի կատարումն այս հրամանի պատշաճ կարգադրութիւնն անելու:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է՝

ՆԻԿՈԼԱՅ

Ցարսկօէ Սէլօ, 8 յուլիսի 1915 թ-ի:

Ճշգեց՝ մինիստրների խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Գօրեմըկին:

ԱՅՆՈՒ ԱՄԵՆԱՅՆԻ ՊԻՏԻ ԱԶԱՏՆԷ

Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան խորհրդի բացատրութիւնը Աբովեանի արձանի վերաբերմամբ, որ տպվեց «Մշակի» № 146-ում, շատ տգեղ գոյներով է պատկերացնում հայ անդրիագործ Ա. Տէր-Մարուքեանի վարմունքը:

Յայտնվում է, որ պարոնը Միութիւնից ստացել է կոպէկներով գանձված արձանի գումարները և չի կատարել Կուլտուրական Միութեան և հայ հասարակութեան առաջ յանձն առած պարտականութիւնները:

Ցաւալի հասարակական երևոյթ, տխուր, դատապարտելի վերաբերմունք դէպի մի հասարակական սրբազան գործ և դէպի մի թանգագին յիշատակ: Եւ ես հոգեկան խորին վրդովմունքով դատապարտում եմ հայ անդրիագործի այդ վարմունքը:

Սակայն խնդիրը սրանով չի լուծվում: Աբովեանի արձանը մնում է բանտարկված Պարիզի արհեստանոցներից մէկի փոշիում: Այսպէս թէ այնպէս՝ պիտի նրան ազատել այդ անվայել վիճակից: Կուլտուրական Միութեան խորհուրդը պարտաւոր է իսկոյն և եթ 3000 ֆրանկ փոխադրել պ. Մ. Կրասիլնիկեանին և արձանը բերել տալ Երևան: Այս արդէն պարտաւորական է Միութեան համար և անյետաձգելի, և պատերազմը չի կարող խանգարել մեր ազգային վիպասանի անգին յիշատակը դատարանական սկանդալներից ազատելու:

Շիրվանզադէ

ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1906 թ. պ. Գ. Ենգիբարեանի յարուցած այն հարցին թէ՝ «Ո՞րը պիտի լինի հայ ազգի քաղաքականութիւնը», տողերիս գրողը նուիրել էր մի ընդարձակ յօդուած «Ազգային քաղաքականութիւնից առաջ անհրաժեշտ է ազգային միութիւն» վերնագրով և վերջացրել էր այս խօսքերով.

«...Օգտվելով մամուլի ու խօսքի ազատութիւնից, պէտք է հնարաւորութիւն տալ, որ ժողովուրդը բարձրացնի իր հեղինակաւոր ձայնը, տայ իր անաչառ վճիռը ու ձեռքն առնի միութեան գործը, որի անհրաժեշտութիւնը զգում է ամեն մի հայ: Միութիւնն ոյժ է, իսկ ոյժն՝ իրաւունք: Ազգային քաղաքականութիւնից առաջ ստեղծենք ազգային միութիւն: Եւ թող այդ միութիւնը լինի մեր առաջին և հաւատարիմ դաշնակիցը»:

Այն օրից անցաւ ինը տարի. միութեան տեղ հայ ազգի մէջ՝ թէ Մասիսի այս կողմը և թէ այն կողմը, առաջացան նորանոր պառակտումներ: Բանի ոյժը խեղդեց ճշմարտութեան ձայնը. ազգի իսկական բարեկամները մէկը միւսի ետևից բարձրացան Գողգոթա. անտերեկված ժողովուրդը իսպառ զրկվեց ձայն բարձրացնելու իրաւունքից:

Էլ կասկած չը մնաց, որ կան մարդիկ և խմբակցութիւններ, որոնց՝ ազգի միութիւնը ամենևին ձեռնտու չէ...

Ծագեց բալկանեան դաշնակիցների պատերազմը, երբ՝ քանի-երորդ անգամը լինելով՝ քաղաքական շահմատի վրա կրկին երևաց հայկական հարցը: Դարձեալ զգացվեց ազգային միութեան անհրաժեշտութիւնը և այս էջերում քանիցս կոչ ուղղվեց հայ ազգին:

Ծագեց համաեւրոպական պատերազմը. վրա հասաւ ճնշված ազգերի ազատագրութեան բարեպատեհ մոմենտը, մի մոմենտ, որ հարիւրաւոր տարիները մի անգամ հազիւ է այցելում լքված, մոռացված, թոյլ ու անզօր ազգերին: Եւ այս էջերում կրկին ու կրկին շեշտվեց ազգային միութեան անհրաժեշտութեան վրա:

Ապա քրիստոնէութեան, մանաւանդ հայութեան դարաւոր դահիճը՝ Թիւրքիան խառնվեց համաեւրոպական պատերազմին: Եւ տանջանքի ու տառապանքի խաւարչտում ապրող այրվող ու տառապող Թիւրքահայերի ազատութեան շանսերը հարիւրապատիկ աւելացան...

Ի՞նչ զարմանալի հակապատկեր. Մենք գիտէինք և տեսել էինք, որ պատերազմը, արիւնն ու մահը բերում են վիշտ ու արտասուք միայն: Բայց այս անգամ նրանք մեզ բերեցին ուրախութիւն:

Այն ժամանակ, երբ հայ երիտասարդութիւնը գունդագունդ վազում էր պատերազմի դաշտը՝ իր թանգագին կեանքը Թիւրքաց Հայաստանի ազատութեան զոհ բերելու հաստատ որոշմամբ, երբ հայ կանայք ու հարսներն իրանց զարդերն էին զոհաբերում, երբ հայ արհեստաւորը, բանւորը, ծառայողը, վաճառականը և ամենքը՝ առանց խտրութեան՝ պատրաստ էին տալու ամեն ինչ և՝ վերջապէս՝ երբ պատանիներն ու աղջիկներն էլ փախչում էին դէպի կռւի դաշտը, ասացէք, միութեան այս հոյակապ տեսարանի առջև այն ո՞ր քարասիրտ հայի աչքերից էր, որ ուրախութեան արցունք չէր հոսում:

Բայց այն ժամանակ, երբ մենք որպէս վարձատրութիւն այդ ընդհանուր, ամեն տեսակ գնահատութիւնից բարձր ու թանգ զոհաբերութեան՝ մեր ցանկութիւններն էինք ձևակերպում Թիւրքաց Հայաստանի վեց թէ եօթ վիլայէթների համար, ես ուզում էի պոռալ ու կրկնել ինը տարի առաջ գրվածը թէ՝ պարոններ, բոլոր մեր գեղեցիկ ցանկութիւններից առաջ անհրաժեշտ է ազգային միութիւն: Ստեղծենք այդ միութիւնը, ինչ գնով էլ ուզում է լինի: Եթէ նախ մենք միմեանց ձեռք չը մեկնենք, միմեանց իրաւունքներն ու արժանիքները չը յարգենք, իրաւունք էլ չենք ունենայ պահանջելու օտարներից, որ մեզ ձեռք մեկնեն ու մեր իրաւունքները յարգեն: Եթէ մենք դարձեալ մնանք պառակտված և իւրաքանչիւր մի հատուած, խմբակցութիւն, կազմակերպութիւն իր ոյժերին կռթնած՝ աշխատի միւսներին հալածել ու չէզոքացնել, եթէ ձգտի տիրապետութեան ոյժն ու իրաւունքը իր ձեռքում ամփոփելով՝ բռնութիւն գործ դնել միւսների վրա, այն ժամանակ մենք երբեք էլ չենք ունենայ խաղաղութեան կոնգրէսի առաջ ելնելով պահանջելու, որ ազատեն մեզ բռնակալութեան անողորմ ճիրաններից...

Դա ամբողջ ազգի ցանկութիւնն է, ամբողջ ազգի պահանջը:

Այսպէս էր ընդհանուր տրամադրութիւնը, երբ Թիֆլիսի Կենտ. Բիւրոյի կողմից այստեղ եկաւ նրա ներկայացուցիչը այս տարւայ սկզբին: Եւ բազմամարդ ժողովում շատ քաղցր յոյսերով մեր սրտերը լցնելուց յետոյ, աւետեց մեզ ամենից թանգագինը, ամենքիս փափագածը՝ ազգային միութեան լուրը:

«Այժմ այլ ևս չը կայ կուսակցութիւն, չը կայ քաղաքական դաւանանքի խտրութիւն,—ասաց նա մի առանձին հանդիսաւորութեամբ, — բոլոր կուսակցութիւնները, դասակարգերը, հոսանքները միացել են Ազգային Բիւրոյի մէջ...»:

Ինձ թւաց թէ ազատութեան աւետաբեր հրեշտակի ձայնն եմ լսում:

Թովման, որ շատ պատճառներ ունէր չը հաւատալու նման աւետումներին, մինչև որ վէրքը իր աչքով չը տեսնէր ու իր մատներով չը շօշափէր, պատմական բոպէի գերբնական ազդեցութեան տակ նա էլ հաւատաց ու սկսեց քարոզել թերահաւատներին հրա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՊՐՈ՞ՒՄ Է...

(Պատկեր)

I

Նրանք դուրս եկան հիւանդանոցից: Մի քանի քայլ կարողացան անել, կինը կանգնեց: Ամուսինը, որ բռնել էր հիւանդ կնոջ կռւից, օգնեց մայթի վրա բարձրանալու, բայց, տեսնելով որ չի կարողանում քայլել, նստեցրեց հէնց կանգնած տեղում:

Հիւանդանոցի ընդունարանի սրտակտուր տնքոցները, լուռ հառաչները և պաշտօնական ցուցակագրութիւններն օրօրում էին տղամարդու միտքը: Մի քանի անգամ նա բարձրացրեց աչքերը, ստուգեց իր լսածները, յետոյ իջեցրեց գլուխը: Սկիզբը նրան թւաց, որ լաւ չի լսել, բայց ցուցակագրողը մէկ էլ կրկնեց.

— Ուշ է,—ասաց նա,—միևնոյն է, այսօր չէք հասնի հերթին. տեսէք որքան սպասող կայ... Այ, այդ մարդը երկու օր է՝ գալիս է...

Նրա երեսի գծերը խորացան և հայեացքը դարձաւ բարկացկոտ ու վշտալի, շրթունքներին վրա սառեցին արեան վերջին հետքերը:

Մինչդեռ փողոցում սաստկանում էր աղմուկը: Ելեքտրաքարշը զանգահարելով և սուրալով անցաւ նրանց առջևից: Հիւանդ կինը փակեց աչքերը, կծկվեց նստած տեղում:

— Սերոբ,—հառաչեց հիւանդը,—ինչ է այնտեղ. բոլորը ինչու է սևացած...

Հիւանդն ընկճվեց աւելի: Ամուսնու ձեռքը նրան նորից ոյժ տուեց: Նա փորձեց բարձրանալ:

— Զգոյշ, կաց...

Մի դիրքաւոր պարոն, ձեռքերը գրպանները դրած, անցաւ նրանց առջևից: Սերոբը կանգնեց: Պարոնը նեղացած կնճռեց երեսը: Նրան դուրս չեկան այդ երկու՝ արարած կռչվածները և սրանց մօտ խմբված դատարկաշրջիկները:

— Պարապ մարդիկ,—մրմնջաց նա,—մարդու ճանապարհն են միայն կտրում:

Ամուսինը կռացաւ, որ կնոջ կռւը աւելի յարմար վերցնէ. հարկաւոր էր շուտով գնալ տուն: Բայց այդ միջոցին մի այլ անցորդ անզգոյշ կերպով դիպաւ հիւանդի ուսին: Թշուառ կինը կծկվեց, աչքի կոպերը սեղմեց, նիհար շրթունքներով ինչ որ մրմնջաց:

Սերոբը հասկացաւ: Անցորդը չը նկատեց նոյնիսկ հիւանդին և քաղաքի սովորութեան համեմատ շատ անտարբեր անցաւ, կարծես ոչ մի նեղութիւն պատճառած չը լինէր:

Ցաւված, կտրված սրտով, ինքնամոռացութեան մէջ Սերոբը շուռ տուեց երեսը և, խեղդվելով վիրաւորանքից, բացագանչեց.

— Դեհ՜ր... դեհ՜ր...

II

Տանը հաշիւ տալով իր տեսածներին՝ Սերոբը լռեց: Նրա դռան մօտեցաւ հարևանը և ինչ որ բան ասաց: Բայց դրսի աշխարհը գոյութիւն չունէր Սերոբի համար:

— Սերոբ, էն փողոցի դարիվերից մի տղայ էր եկել, ասում էր՝ ջուր չունենք,—կրկնեց հարևանը:

— Հա՛, էլի է՞ն վերևը...

Եօթը տարի է, որ նոյն գոչերը նա լսում է. եօթը տարի է, որ շալակում է ջրի տակառը, վազ է տալիս դէպի ջրանցքը, նորից շտապ գալիս, դատարկում, նորից վազում... Բայց և ամեն անգամ նա յոյս է տածում, թէ կը բացվի նրա համար մի բարի օր: Մինչդեռ օրերը նոյն յամառութեամբ կրկնվում են մաշուկ, տանջալից, կէս-կուշտ, կէս-քաղցած, իսկ սիրտը խոցված, արիւնաքամ. և այդպէս մի՛շտ, մի՛շտ...

— Սերոբ, այսօր լուացք ունենք,—նորից կրկնեց հարևանը,—շատ ասաց ձկը գայ թէ չէ՞ դրկիրս... էն դարիվերից...

Բայց Սերոբի միտքը կանգ է առնում մի բանի վրա՝ ինչպէս թողնել կնոջը: Երկու տարի է, որ նա լսում է կնոջ յուսահատական նվոցները՝ տնքում է. տնքում է... Վերականգնե՞լ առողջութիւնը: Ինչպէ՞ս: Վշտանում է Սերոբը կնոջ տանջանքներից: Իսկ երբ յիշում է նրա առողջ օրերը, ընկճվում է կամքը, ցնցվում են մարմնի անդամները: Կինն ասեղ էր քաշում, ինքը տակառը շալակում... ծանր էին այդ օրերը, չորքաշ, բայց էլի Սերոբի մտքից չէին հեռանում, չէին հալածվում անցեալի յիշողութիւնները: Բայց պէտք է գնալ, հարկաւոր է հաց գնել... «Ուրեմն գնա, Սերոբ, բարձրացիր դարիվերը»:

Եւ գնում է Սերոբը, գնում է, [illegible] զգում է, որ ուղեղը դեռ գործում է, իսկ մարդիկ էլ ասում են՝ որ նա ապրում է:

Ապրո՞ւմ է...

Երրորդ ծայրն է կտրում Սերոբը:

— Էլի չորս է:

III

— Սուտ եմ ասում, խօ չեմ ջնջում. քո երեք կոպէկին եմ մնացե՞լ:

Բայց Սերոբը յիշում է, որ չորս տակառը անցեալ օրն էր լրացրել Վիրաւորական է, բայց հաշտվեց. կաւիճով մի գիծ աւելացնելով դռան գլխին եղած խազերին, նա շուռ եկաւ անխօս:

Փողոցում նրան հասաւ Գրիգորը՝ մի թուլակազմ, բայց աւելի աշխատաւոր ջրկիր:

— Հէ, էլի նրա համար ես տանում. կը խաբէ, կը խաբէ:

— Ինչ անես, էլի լաւ է, որ կայ:

— Հա՞, մեր դրութիւնը շան դրութիւն է: Այ էն փողոցի գլխին երկու բակումն էլ ջուր են բերել: Շաբաթական տասը շահու ջուր էր վերցնում ամեն մի տունը, իսկ այդ բակում տասը տուն կայ, ջրանցքն էլ մօտ էր: Ջրկի՞ր: Հիմի էդ դարիվերով բարձրացիր, հա բարձրացիր... Մարդու մէջք է, փոր խօ՞ չէ: Ջրանցքը մեր տանը քանդում է: Կինդ ինչպէ՞ս է: Տարե՞ր հիւանդանոց:

— Տեղ չը կայ:

— Տեղ չը կա՞յ: Բա ինչ պէտք է անէ մեր պէս մարդը, դուրսը մնա՞յ: Խնդրեցի՞ր:

— Եթէ այդպիսի հիւանդներին ընդունենք, ասում է, տասը հիւանդանոց էլ լինի՝ չի հասնի: Մենք, ասում է, ընդունում ենք այնպիսիներին...

— Ուրի մի տեղը էն կեանքումն է: Սատանի ջինս էր... Մի վհատվիր, Սերոբ, Աստուած ողորմա՛ծ է:

IV

Գուցէ մի այլ ժամանակ Սերոբը չը վըհատվէր, բայց ոչ այժմ: Նա իրան շատ վատ էր զգում: Նա սիրում էր կնոջը, խղճում էր նրան—նա դեռ ջահել էր—բայց չէր կարողանում ոչնչով օգնել:

Մի վհատվիր:

Դժուար չէր ասելը՝ «դիմացիր թշուառութիւններին, կեանքի անախորժութիւններին»: Ընկճված, վհատված, հալ ու մաշ եղած, նկուղների մէջ մաշվում կոլոլված իր նման մոռացվածների շրջանում Սերոբը շատ անգամ է սիրտ տուել, խրախուսել, կեանքի գուժերի շարան-շարան տպաւորութիւնները զգացել. և ինչ նոր խօսք կարող է լինել նրա համար ընկերոջ խրախուսանքը: Այժմ օգնութիւն է հարկաւոր: Խեղճ կինը ցամաքում է առանց բժշկի մխիթարիչ այցելութեան: Սիրտը տնքում է. շունչը կտրվում, ոտքերը խոշտանգվում. ուզում է ասել, չի կարողանում, պառկում է, որ քնէ՝ կողքի ցաւը չի թողնում:

— Թէյ կը խմե՞ս. շաքար ունենք, բերել եմ,—դիմեց նա կնոջը՝ ձեռքը դնելով ճակատին:—Տաքութիւն չը կայ:

Հիւանդը յառեց աչքերը օձորքին և չը պատասխանեց:

Ամուսինը նորից հարցրեց.

— Եթէ բժիշկը չեկաւ այսօր էլ, ես կերթամ մօտը նորից:

— Թոյլ եմ,—կամենալով ամուսնու խօսքըն անուշադիր չը թողնել, ասաց կինը:

Նրա ձայնն երերաց, սրտաճմլիկ տնքոցները չէին ընդհատվում:

— Այստեղ ինչ-որ բան խեղդում է: Ախ, եթէ այդ խեղդոցը չը լինէր: Դու ո՞ր բժշկին գնացիր, թաղակա՞ն բժշկին... Նա սկի չի գայ. փող տալու տեղ չէ:

— Ես էլի կերթամ:

— Գնա այդ նոր շինած հիւանդանոցը: Քեզ ծանր է ինձ հոգալը, գիշերներն անքուն, ցերեկին գործ...

— Գնացել եմ այդ նոր հիւանդանոցն էլ:

— Հը՞:

— Պառկելու համար փող են ուզում:

— Ինչքա՞ն:

— Տասներկու ու կէս...

Հիւանդը ձեռքը դրեց ամուսնու ափի մէջ, և երկուսն էլ լռեցին:

Լռութիւնը թանձրացրեց նրա վիշտը: Եւ չը գիտէր Սերոբը, թէ ինչո՞վ է տկար կինը, ի՞նչ վախճան կը ստանայ նրա տկարութիւնը: Նա տեսնում է միայն, որ կինը հալվում է, տառապում է: Ուսերն այնքան նուազել են, որ 13 տարեկան մի աղջկայ թիկունքին են նմանում, կողերի ջըղերը համարել կարելի է... Շատ է նիհարել:

— Ձեռքդ այնքան սառը չէ,—ասաց նա սիրտ տալու նպատակով, երբ կինը մի շարժում արաւ անկողնում:—Մի քիչ մըրսած ես... Սօնան ասում է, որ մրսածը եթէ շուտ քաշեց՝ վախ չը կայ:

V

Վերջին շաբաթը հիւանդի դրութիւնն աւելի ծանրացաւ: Թաղական բժիշկը մի անգամ եկաւ, բայց ահա 5-րդ օրն է, որ այլևս չի գալիս: Նա խորհուրդ տուաւ ձու տալ, կաթ տալ, սենեակը փոխել: Բայց մինչև օրս ոչ մինը չի արած: Սերոբը կենտրոնացրեց աչքերը կնոջ երեսին, խորին հոգացողութեամբ ուղղեց անկողինը: Ձեռքի կոշտուկներն այնքան ամուր էին, որ կնոջ ուսերը ցաւ զգացին ամուսնու շոյանքներից:

շափառ յարութիւնը ազգային միաբանութեան, որը վաղուց մեռած ու թաղուած էր մեր իսկ ձեռքով:

«Տուր ինձ ձեռքդ, եղբայր ենք մենք, որ մորթւած էինք զատուած...»:

Ա՜խ, որքան ցանկալի էր, որ այդ նը լինէր սին յոյս, որքան կուզէինք, որ անմիաբանութեան բերած դալուար տանջանքն ու սարկութիւնը հային մի քիչ խրատած, խելքի բերած լինէին:

«Սրբազան վայրկեան»:

Այսպէս է վերտառում բժշկ. Բ. Նաւասարդեան «Մշակի» անցեալ տարւայ № 285-ում լոյս ընծայած իր յօդուածը:

«Վեհափառ Կաթողիկոսը, խոնհասոյզ ու մռայլոտ, կանգնած էր իր հայրապետական գահոյքի առջև:

«... Եւ ես տեսայ Վեհի արցունքը...

«— Դուք էլ արտասւում, Վեհափառ Տէր:

«Վեհը հեկեկաց»...

Իսկապէս սրբազան վայրկեան:

Կարիք կա՞ր հարցնելու՝ «Դուք էլ արտասւում էք», քանի որ տեսնում էր արտասուքը՝ կը հարցնեն:

Այո, կարիք կար. լինել խոնհասոյզ, մռայլոտ և արտասուել, սա կարօտ է բացատրութեան:

Եւ այդ հին 1877—78 թւականների անկեղծ հայրենասէրը՝ բժշկ. Նաւասարդեանը երևի ուզում էր Վեհից լսել, թէ արդեօք այն ուրախութեա՞ն արցունքներ էին, թէ այդ հանդիսաւոր կամ, ինչպէս ինքն է ասում, սրբազան վայրկեանում նրա միտքը սլացել էր դէպի հեռու պատմական անցեալը, երբ հայ թագաւորները, իշխանները, նախարարները իրանց անձնական փառքի ու շուքի համար վաճառում էին հայրենիքը. երբ ամեն մի ստահակ ոյժ ու իրաւունք ձեռք բերելով՝ տանջում, հարստահարում ու հալածում էր հայ ժողովրդին. երբ անողորմ բռնութեան ու արհաւիրքի մատնւած հայը իրաւունք չունէր բողոքելու, ձայն-ծպտուն հանելու, երբ... Վերջապէս մեր պատմութեան մէջ քիչ բաներ կան, որոնք ոչ միայն արցունք պիտի հոսեցնեն ամեն մի անկեղծ հայրենասէր մարդու աչքերից, այլ և շիթ առ շիթ արիւն հոսեցնեն:

Եւ՝ ով գիտէ, գուցէ բժշկ. Նաւասարդեանի տեսած արցունքն էլ մի լուռ ճիչ է, ցաւի ու վշտի ճիչը, դարանամուտ անմիաբանութեան ժանտ նոյուածքի ազդած սարսափի ճիչը...

Ո՞վ գիտէ, ո՞վ կարող է մարդուս հոգու խորքը թափանցելու: Չէ որ կան զոյգ աչքեր, որոնք ընդունակ են աւելի շատ բան տեսնելու, աւելի հեռուն ու խորը, քան հարիւր հազարաւորները կարող են տեսնել:

Կրկին լսում եմ Բիւրօյի ներկայացուցչի ձայնը, բայց նա ականջիս այժմ հնչում է լարերը փչացած, ջարդւած դաշնամուրի նման աններդաշնակ:

Այդ ձայնը հնչում է ամեն մի հայի ականջին, և ամենքն էլ պատրաստ են պօռալու՝

— Ամենից առաջ ազգային միութիւն:

Ա. Ց. Մուրադեան

Սամարղանդ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՂԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

I

Ժամանակակից գիւղում ծնւում է առել և ձգտում է տիրանալ քաղաքացիական իրաւունքի մի հասարակական խոշոր երևոյթ, որը խորանալով ու արմատանալով արդէն գրաւել է ընդհանուրիս ուշադրութիւնը և անշուշտ մի օր արժանանալու է լուրջ ուսումնասիրման ու վերագնահատման. այս նոր երևոյթն աշխատաւոր գեղջկուհիների ազատագրական շարժումն է:

Երկար ու ձիգ դարերի ընթացքում գիւղական կանայք, կաշկանդւած լինելով նահապետական հասարակակարգի նախապաշարմանց, սովորոյթների և յարաբերութիւնների մանուածապատ ցանցակապով, զրկւած են եղել ինքնուրոյն դրութիւնից ու գործունէութիւնից, ամենուրեք փակ է եղել նրանց առաջ հասարակական ասպարէզը, խեղդւած չինական բարձրապարիսպ պատնէշներով, կարօտ քաղաքակիրթ աշխարհի թարմ ու կենսաբեր հոսանքին՝ հնարաւորութիւն չեն ունեցել մարզել և արտայայտել իրանց բնատուր ձիրքը, ազատ զարգացնել ու մշակել իրանց ունակութիւնները, օգտակար լինել հայրենիքի կուլտուրական ու տնտեսական կեանքի առաջխաղացման, չը նայած իգական սեռը, հնագոյն ժամանակից սկսած, գործադրել է գիւղատնտեսութեան մէջ, տղամարդուն համահաւասար, իր ամբողջ եռանդն ու աւիւնը՝ կատարելով շատ անգամ ծանր ու մաշող աշխատանքներ:

Ի զուր չէ, որ քաղաքակրթական պատմութիւնը համարելով կնոջն երկրագործութեան նախամայրը՝ նրան է վերագրել կուլտուրական ու բժշկական բազմատեսակ բոյսերի գիւտը և առաջին մշակութիւնը, կաւէ ամանները պատրաստելը, կտոր գործել և այլն:

«Նախապատմական շրջանում մօր մասին եղած հասկացողութիւնը կապւած էր մշակած հողի սեփականութեան հետ»—գրում է Լիպպերտը:

«Ժամանակակից կուլտուրական ազգերի նորմալ տնտեսութեան մէջ,—ասում է Բիւխները,—տարւած է, այսպէս ասած, միջաբաժան գիծ, որով տղամարդուն է ընկնում արտադրական աշխատանք, իսկ կնոջը՝ սպառման հոգսը. մինչդեռ նախապատմական տնտեսութեան մէջ տարւած էր երկարաձիգ գիծ, որով իւրաքանչիւր սեռը հաւասարապէս մասնակցում էր արտադրութեան՝ ունենալով սեփական սպառման տարբեր ֆունկցիաներ»:

Կարծես նախախնամութիւնը ի վերուստ տնօրինել է, որ գեղջկուհին, ի սկզբանէ, լինի բնութեան գրկում, դաշտում տղամարդու ընկեր-օգնականը, իսկ տան յարկի տակ, չորս պատերի արանքում նրա իրաւազուրկ աղախինը, խոնարհ ու հլու կամակատարը:

Բայց հասարակակարգի գլխաւոր գործոնների աստիճանական զարգացման հետ զուգընթացաբար առաջ է եկել մարդկութեան խոշոր զանգւածի, աշխատաւոր կանանց իրաւահաւասարութեան սոցիալական ծանրակշիռ խնդիրը, որը ձևակերպւելով ու բիւրեղանալով դառաւ անցեալ դարում մի հասունացած ու հրատապ շարժում, որը հրամայողաբար պահանջում է իր արմատական լուծումը:

Ներկայ համաշխարհային պատերազմին կին-անհատի անգնահատելի դերն և արդիւնաւէտ գործունէութիւնն աւելի են բարձրացնում կուլտուրասէր հասարակութեան աչքում կանանց դատի իրաւական ու բարոյական նշանակութիւնը և գրաւում է իր կողմ ամենքիս համակրանքն ու խրախուսանքը:

Մանաւանդ վեր է գովասանքից աշխատաւոր գեղջկուհու հերոսական ձիգը տնտեսական կեանքի համագործակցութեան մէջ:

Գիւղացի կինն, իր յոյսն ու ապաւէնը, իր տան միակ սիւն զաւակին կամ ամուսնուն ռազմադաշտ ուղարկելուց յետոյ, ամբողջովին փոխարինել է նրան, պլիւս այս ծանր պարտականութեան՝ իր մանրիկ զաւակների մայրական հոգատարութիւնը:

Նոյնիսկ հայկական այն վայրերում, ուր կնոջ ասպարէզը սահմանափակւած էր «ընտանեկան-խոհանոցային» նեղ շրջանում, ուր նրա մասնակցութիւնը գիւղի տնտեսական ու կուլտուրական կեանքում հաւասար էր զերոյի, այսօր վերանալով այդ դարաւոր կղզիացումը՝ լայնացել է կնոջ գործունէութիւնը, զօրաւորվել է նրա պարտականութեան ուղին և ընդարձակվել են նրա իրաւունքի սահմանները:

Այժմ ժրաջան գեղջկուհին և վարում է, և ցանում և հնձում և կառավարում: Մի խօսքով՝ անտրտունջ կատարում է իր ուսերի վրա ծանրացած գիւղատնտեսական բազմազան աշխատանքները և գոհ ու սրտաբաց տանում է իրան վիճակւած ընտանեկան ցաւատանջ հոգսեր ու նեղութիւններ:

Գիւղացիական կեանքում աշխատանքի նոր բաժանումն է առաջ բերել հովւուհի, կին-մաճկալ, կին-սայլապան, կին-հոտաղ, կին-գերանդաւոր և այլն, և այլն:

Հազւագիւտ չեն և այնպիսի գիւղեր, ուր հասարակական պաշտօններն անգամ զբաղւում են փաստօրէն կանանց իրաւասութեան տակ, կամ նրանց ազդեցութեան շրջանում: Դարաւոր բռնութիւնն կարծես այլևս անզօր է իր աւանդական ներշնչումով խեղդամահ անել կանանց մէջ նախաձեռնութեան ու ինքնագործութեան ոգին և արգելք հանդիսանալ ճնշւած սեռի ազատագիր շարժման լայնածաւալ հոսանքին:

Հասարակական կեանքի հունակործան հեղեղատը սրբում և տանում է բոլոր պատուարները և բաց է անում կնոջ համար ազատ գործունէութեան լայն ասպարէզ:

Գիւղացիական տնտեսութիւնից եթէ անընդհատ, մի կողմից, նւազում են արտադրական ոյժեր, միւս կողմից նրա է խուժել աշխատաւոր կանանց հոծ բազմութիւն. այս տեղատւութեան ու մակընթացութեան ընթացքում գլխաւոր օբեկտը, գիւղատնտեսութիւնը, ոչ միայն չէ տուժում, այլ խելացի եղանակով խնամվում և մշակվում է:

Կինն իր ծագման առաջին օրից եղել է հնատես ու տնարար, աշխատասէր ու արագակատար, նազելի ու ճաշակաւոր. բնական է, որ այս անմահ յատկութիւնների անպայման պէտք է անդրադառնան այն բոլոր ձեռնարկութիւնների վրա, որոնց շօշափած լինի կնոջ մատը, որոնց վրա ցաւեն ու կոշտանան նրա ձեռները, որոնց թրջէ նրա արիւն-քրտինքը և վերջապէս որոնց վրա սպառվեն նրա ոյժն ու եռանդը:

Ներկայ ռազմական մեծ մոմենտում, ամենայն վստահութեամբ կարելի է պնդել, իգական սեռն իրականապէս իր ձեռն է առել գիւղատնտեսութեան գլխաւոր ճիւղերի ընդհանուր ղեկը և կատարում է նրանց պժտաւոր ֆունկցիաներն աւելի աջող և աւելի արդիւնաւէտ: Բացի այդ՝ գեղջկուհին տանելով իր պարտականութիւնն անչափ սիրով ու եռանդով՝ գործի մէջ մտցնում է խինդ ու ծիծաղ, կենսունակութիւն ու ազնւութիւն. իսկ այս ամենը հաստատ գրաւական են հասարակական ձեռնարկութեանը նպաստող պայմանների բարեյաջող զարգացման և հետևանքին...

Անշուշտ զինադադարից յետոյ խաղաղութեան ժամանակ էլ շարունակելու է աւելի ուժեղ թափով գիւղացիական կեանքի այդ սոցիալական շարժումը, որն աւելի պատուաստվելով և հիմնաւորվելով մարմնացնելու կանանց ազատագրութեան հասունացած հարցը:

Գալու է մի փառաւոր ժամանակաշրջան, երբ պետական օրէնսդիր մարմինն ընդառաջ գնալով կեանքի անյետաձգելի պահանջին՝ հիմք կը դնի աշխատաւոր կանանց իրաւահաւասարութեան՝ մշակելով նրա գլխաւոր նորմաները:

Եւ այն հասարակական երևոյթն, որ ներկայումս կատարվում է մեքենայաբար, տարերային էներգիայի մղմամբ ու ճնշմամբ, թոյլ ու անկազմակերպ, կը դառնայ գիտակցական ու իրաւական և այն ժամանակ մարդկութեան իրաւազուրկ մասը, իգական սեռի խոշոր կազմութիւնը, հնարաւորութիւն կունենայ ազատ մասնակցել ժամանակակից հասարակութեան սոցիալ-քաղաքական ծանրակշիռ ու ցաւատանջ պրօբլեմների դրական լուծման:

Այս վարդագոյն ապագան շատ հեռու չէ...

Репортеръ

ՓՐԿՆԵՑԷՔ ՔԱՆԻ ՈՒՇ ՉԷ

Արդահան, 27 յունիսի

Թիւրքաց անխնայ կոտորածն և կողոպուտը փոխանակ հայ ժողովրդին զգաստացնելու, ազնւացնելու՝ առաջ է բերել հրաշքով կոտորածից ազատվածների մէջ անխղճութիւն, եղբարատեցութիւն, լրբութիւն. ծերն ու չափահասը կորցրել են բանականութիւնը, երիտասարդը մէկ կողմ է շպրտել քաղաքակիրթ աշխարհի բարոյագիտութեան առողջ սկզբունքը, կնոջ և քնքուշ մատաղացիների բերնից փողոցներում միմիայն հայհոյանք է լսվում, ամօթխածութիւնը վերացրած է: Թիւրքը հնամտալով՝ թողել է ժառանգութիւն իր բոլոր գազանական սովորութիւնը. նա ուզեցել է ազատվածներին ևս բարոյապէս մահացնել:

Սա շատ ցաւալի երևոյթ է, բայց ինչ արած, որ իրականութիւն է: Պէտք է անապարել՝ փրկելու այս թշուառներին, մանաւանդ մատաղներին:

Այս գործում մեծ դեր ունեն կատարելու մեր կուլտուրական, դպրոցական և եկեղեցական հաստատութիւնները: Նրանք, քանի դեռ ուշ չէ, պարտաւոր են ուղարկել անմիջապէս հմուտ, ժողովրդի ցաւերով տոգորված և իրանց կոչման արժանի, սիստեմատիկօրէն աշխատող, այլ ոչ թէ շատակեր վճարվող գործիչներ, լինեն դրանք հոգևորական թէ աշխարհական՝ դա միևնոյնն է:

Այո, կառավարչական և ժողովրդական նիւթական օգնութիւնները փրկում են անօթութիւնից և մերկութիւնից՝ Արդահանի, Տանձոտի (Եներաբարի), Նորաշէնի, Սաթլելի, Մամանելիսի, Օկրօբագէտի, Փխեթվրի հայ ժողովրդին: Բայց այս տարաբաղդներին պէտք են և այնպիսի գործիչներ, որոնք մտածեն ժողովրդի ընկած բարոյականը վերականգնելու: Միմիայն այդպիսի անձնուէր ու սրտացաւ գործիչները կարող են եա կասեցնել ժողովրդին բարոյական անկումից: Անհրաժեշտ են մեզ աչքիւ և բարի ուսուցիչ-մանկավարժներ, որոնք, իրանց հերթին, փրկէին մեր մատաղ սերունդը:

Օննիկ Արամեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Անձրևների դադար

Կարս, 4 յուլիսի

Երեք ամիս անընդհատ տեղացող անձրևները վերջապէս դադարեցին: Ահա 10 օր է՝ անձրև երես չենք տեսել: Բուսականութիւնը փարթամ է. հնձոց ձեռքերը պակաս են:

Ս. Տէր-Մելքիսեդեկեան

Ղազանչի գիւղն աղէտված

Ղազանչի (Հին-Նախիջ. գ.), 28 յուն.

Հին-Նախիջևանի Ղազանչի գիւղը գտնւում է լեռնոտ միջավայրում, ունի 200 տուն ազգաբնակութիւն: Հին-Նախիջևանից 24 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում: Ունի անջրդի վարելահողեր և այգիներ, որոնց բերքը գտնվում է շատ աննախանձելի վիճակում, մանաւանդ 1905-ից յետոյ:

Այս տարի սպասվում էր լաւ բերքի, այն էլ բնութիւնը չը թողեց: Յունիսի 7-ին մինչև օրս չը տեսնված կարկուտ եկաւ. սկզբում հաւի ձուի մեծութեամբ, յետոյ կաքաւի ձուի մեծութեամբ, վերջը մանր: Մեծ կարկուտներն ունէին կալպոյտ, միջի մասը եղերված սպիտակ գոյնով:

Կարկուտից յետոյ սարերից ու ձորերից իջաւ ահագին մի հեղեղ, ու բացի այն, որ շատ անեւ սրբեց տարաւ, շատ գոմեր ու մարագներ լափեց, լուաց տարաւ նաև ցանված արտերը, այնպէս որ կարծես այնտեղ ոչինչ չի եղել: Սերմի հատիկ չի մնացել արտերում, այգիներում խաղողի ողկոյզը ոչ մի տերև չունեն իրանց վրա: Գիւղը այժմ մատնված է վերջին ծայր աղքատութեան:

Գր. ք. Տէր-Ցովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նահանգապետի տրամադրութեան տակ է դրված 25,000 րուբլի հակաժանտախտային ձեռնարկութիւնների համար:

◆ Յուլիսի 15-ին Օդեսայում կայանալու է Ռուսաստանի հարաւի արդիւնաբերողների համագումարը, ուր քննվելու են մի շարք հարցեր, վերաբերեալ արտահանութեան, ի նկատի ունենալով որ առաջիկայում բացվելու է Դարդանէլը: Այդ համագումարին մասնակցելու հրաւէր ուղարկված է ի միջի այլոց տեղիս Բօրսային կօմիտէտին:

◆ Նահանգապետը «Դուշէթ» հիւրանոցի տէր Պայչաձէին տուգանել է 500 ր. հասարակաց կանանց հիւրանոցում պահելու համար:

◆ Դիղուբէի բնակիչները գանգատվել են, որ ամբողջ օրերով նրանք զրկված են խմելու ջրից և ստիպված են գործածել Կուր գետի պղտոր ջուրը: Զերքէզովսկայա, Նիկօլայէվսկայա և Ելիզավէտինսկայա փողոցների բնակիչները դատապարտված են փողի կուլ տալու ամենօրեայ կառքերի և սայլերի երթևեկութեան պատճառով, որովհետև քաղաքային վարչութիւնը չէ մտածում ջրել այդ փողոցները: Բայց չէ որ ջրելու համար խմելու ջուր հարկաւոր չէ, այլ կարելի է վերցնել Կուր գետից:

◆ Էջմիածնից՝ մեր աշխատակից Գ. Տէր-Ռուբինեան հեռագրում է մեզ հետևեալը. «Ողջունում եմ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան դիմում-ձեռնարկութիւնը, որով Ընկերութիւնը աջակից է հանդիսանում ժողովրդական կաբինէտներին: Հաւատացած եմ, որ շատերը արձագանք կը տան Ընկերութեան դիմումին»:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Վարշավայի գեներալ-նահանգապետը փակել է հրէական երեք օրաթերթ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Զեմստւոյին խորհրդակցութիւնների ամփոփումը. (Г. М. Тумановъ. «Итоги земскихъ совѣщаній на Кавказѣ», Тифлисъ. 1915).

Դժւար է Անդրկովկասում մատնացոյց անել մի այլ գրական անձ, որ իշխ. Գ. Թումանեանի հետ մրցէր մեր ծայրերկրի խնդիրների արծարծման մէջ: Այդ հեղինակը տարիներ շարունակ թէ տեղական և թէ մայրաքաղաքի մամուլի մէջ զբաղված է Անդրկովկասի շահերի պաշտպանութեամբ: Իր հասարակական դաւանանքներով նա մի ժողովրդասէր լիբերալ է, չնայած և անկեղծ իր մտայղացումներով: Հեղինակի մեր ծայրերկրին մատուցած ծառայութիւնը խոշոր արժէք ունի: Որպէս նախկին խմբագիր «Новое Обозрѣніе» թերթի, որպէս հրապարակախօս՝ նա անդադրում ջանացել է, որ ռուս առաջադէմ հասարակական միտքը մեր ծայրերկրի կացութեան մասին պատշաճ հասկացողութիւն ունենայ, որ մեր մէջ բնակւած մարդատեսակները չը կարօտեն անցանկալի գոյն տալ տեղական հասարակական ձգտումներին: Այժմ այդ նոյն վաստակաւոր հեղինակը հրատարակել է վերը յիշածս աշխատութիւնը, որ մի պատմական և համադրական ակնարկ է 1909 թւականին Անդրկովկասում տեղի ունեցած զեմստւոյին խորհրդակցութիւնների մասին:

Յիշենք այստեղ, որ այդ նահանգական խորհրդակցութիւնները հրաւիրվեցին փոխարքայի 1909 թ. մայիսի 31-ի շրջաբերականով և նրանց մասնակցեցին պաշտօնեաներից բացի նաև հասարակական զանազան խաւերի ներկայացուցիչներ (քաղաքային ինքնավարութիւններից, ազնուական հողատէրերից, գիւղացիներից և այլն): 1909 թ. խորհրդակցութիւններից և ոչ մէկը վաղաժամ և անիրագործելի չէ համարել զեմստւոյի ներմուծումը Կովկասում: Եղել են տարաձայնութիւններ բարենորոգման կերպի և բովանդակութեան մասին, բայց ոչ էութեան: Բոլոր խորհրդակցութիւնները ընդգծել են, որ առանց զեմստւոյի Կովկասի կուլտուրական առաջադիմութիւնը դանդաղում է: Սակայն, ինչպէս ասացինք, ցանկալի համարելով զեմստւոյի ներմուծումը, կարծիքները բաժանվել են նրա զանազան կողմերի նկատմամբ:

Կարևորագոյն կէտերից մէկը, որ տարբեր կարծիքներ է առաջացրել, այն է, թէ ցանկալի է արդեօք մի հանուր անդրկովկասեան զեմստւոյի գոյութիւնը թէ ոչ: Թիֆլիսի նահանգի խորհրդակցութեան մէջ ընդհանուր անդրկովկասեան զեմստւոյի գաղափարը պաշտպանել է հանգուցեալ Ալ. Բալանթարը: Նրան համակարծիք են գտնվել նաև միւս հայ անդամները: Վրացիները արտայայտվել են հակառակ իմաստով, վախ ունենալով թէ մի զեմստւոյին միաւորի մէջ իրանց փոքրամասնութիւն կը մնան «Արևելեան Անդրկովկասի անկուլտուրական մասսայի մէջ»: Նրանց համար ընդունելի է եղել, որպէս զեմստւոյին վերջին կարգի միաւոր, նահանգային զեմստւոն: Հեղինակը աւելացնում է, որ 1906 թ. ինքն էլ էր կողմնակից Անդրկովկասի համերկրային զեմստւոյին սակայն այժմ չէ պաշտպանում այդ տեսակէտը, որովհետև զեմստւոյին գործառնութիւնները պիտի պատվեն տեղական տնտեսութեան նեղ շրջանակներում, իսկ դրա համար աւելի ձեռնհաս են նահանգային զեմստւոները և նրանց ժամանակաւոր դաշնակցութիւնները: Մենք ցաւում ենք, որ յարգելի հեղինակը հրաժարվել է իր հին տեսակէտից: Անդրկովկասեան համերկրային զեմստւոն նա պէտք է դիտէր որպէս մի աստիճան, որպէս մի փոքր համերկրային ներկայացուցչական հաստատութիւն ունենալու, հաստատութիւն, որը կարող է յետագայում օժտված լինել նաև լայն (համեմատական չափով) օրէնսդրական իրաւունքներով: Եւ մենք ուրախութեամբ ենք արձանագրում այստեղ, որ համերկրային զեմստւոն մամուլի մէջ ունեցել է այնպիսի պաշտպան, ինչպիսին է ռուսական զեմստւոյի յայտնի պատմաբան Բ. Վեսելովսկին:

1909 թւականի խորհրդակցութիւնները տարբեր կարծիքներ են յայտնել զեմստւոյին միւս մանր միաւորների մասին: Մանրագոյն միաւորի, այն է գիւղախմբային զեմստւոյի անհրաժեշտութիւնը չի բացասվել ոչ ոքից: Տարբեր կարծիքներ լսվել են գաւառային և գաւառամասային զեմստւոյի մասին: Խորհրդակցութիւններից ոմանք նախապատւութիւն տուել են երկաստիճան զեմստւոյին (գիւղախմբային և նահանգային), ոմանք եռաստիճան (գիւղախմբային, գաւառային և նահանգական): Այս կամ այն ծրագրի պաշտպանութիւնը պատճառաբանվել է տեղական ոյժերի և նիւթականի գոյութեամբ կամ բացակայութեամբ:

Խորհրդակցութիւնների համար մտահոգութեան առարկայ է եղել և ազգային ներկայացուցչութեան խնդիրը: Այդ նուրբ հարցը միատեսակ վերաբերմունքի չի արժանացել: Յիշենք միայն, որ Քութայիսի խորհրդակցութիւնը նպատակայարմար է գտել ազգային փոքրամասնութեան ներկայացուցչութիւնը: Ընտրական ցենզի համար բոլոր խորհրդակցութիւնները արտայայտվել են նրա չափի պակասեցման իմաստով: Լոկ մամուլի մէջ Բ. Վեսելովսկին առաջադրել

— Կանգնի, Հերիքնազ, կանգնի: Աստուած մեզ չի թողնի: Այ շուտով դռնապանութիւն կը ստանամ, մեր կացութիւնը կը լաւանայ. քսան մանէթ ամսական, սենեակ էլ են տալիս...

— Օ՜, սիրտս,—տնքաց հիւանդը,—սիրելս...

VI

Երկու օր է, որ Սերոբը չի գնում ջրի:

Մէկ-մէկ հարևանները հսկում են հիւանդին Սերոբի բացակայութեան ժամանակ, բայց դրա դրութիւնն այժմ այնպէս է, որ Սերոբը չէ վստահանում բացակայել: Նա սատանալիքներ ունի. տհաճոյ հանգամանք. սեփական փողի համար նա երկու անգամ գնաց: Ինքն էլ իրան լաւ չէ զգում, գլուխը պտտում է. եկել է վրան ինչ-որ մռայլութիւն. ահա նա շատ լաւ յիշում է՝ ծրագրում է այս-ինչ տեղը ջուր տանել, դուրս է գալիս փողոցը, գնում է ջրանցքի մօտ, բայց մոռանում է: Մտքերը պղտորվում են, երբեմն էլ թևաւորվում են, յետոյ յանկարծ կորչում. տեղը բացվում է ինչ-որ դատարկութիւն: Այն ժամանակ հաշիւ է տալիս, ուզում է դասաւորել մտքերը և դասաւորում է կարգին. նրանք կարծես իրանք են վրա տալիս, իրանք թևադրանքներ առաջ բերում: Բայց յետոյ... Ինչ-որ զարկեր քունքերի մէջ և ցրվում ամեն բան:

Վերջապէս, երկրորդ օրը, իրիկնադէմին, նա շալակեց տակառը և գնաց իր սովորական ուղիով: Ջրանցքի մօտ երեք ջրկիր առաջ ընկան նրանից, տակառները դրին: Սերոբը հերթից ետ մնաց. յաջորդ բոպէն ընկերներն արագ-արագ կարեցին փողոցները զանազան ուղղութեամբ: Այդ ժամանակ միայն Սերոբը մօտեցաւ ծորակին, յետոյ բարձրացրեց ջրով լի տակառը և գնաց: «Այժմ կը ստանամ 20 կոպէկ,—անցաւ նրա մտքով,—գիշերս ընթրիք կունենանք»: Նա տարաւ և երկրորդ տակառը, չը կարողացաւ մերժել պահանջը և ստացաւ 23 կոպէկ, բայց երբ եկաւ տուն, ցած դրեց մէջքի բեռը, կամեցաւ տեսնել կնոջը, նրա առաջը կտրեց հարևան Սոնան: Նրա քամված երեսից դժւար չէր գուշակել ասելիքը:

— Աստծու ձեռքին ենք, Սերոբ... Կեանքը քեզ... բաշխեց... Հանգստացաւ խեղճը...

Սերոբը կարծես չը լսեց: Նա չէ կարողանում մտքերը հաւաքել:

Յանկարծ նա ճչաց.

— Այդ ինչ ասիր, կնիկ...

Անկողինը ցնցոտիներից է. ոչ վերմակ, ոչ կարգին բարձ. գզգզված կարպետը փոխարինել էր վերմակը. Նա ընկել էր անշնչացած կրծքից ցած. աչքերը դուրսն էին մնացել. թաթերը քարացած և կապտած՝ ցցված էին դէպի վեր:

Սերոբն ընկաւ անկողնի առաջ, թուլացած գլուխը դրեց կնոջ կրծքին: Նա ուզեց խօսել. շրթունքները դալաճանեցին: Նա զգաց իրան շատ յանցաւոր կնոջ առաջ: Նա չը կարողացաւ գգվել, փայփայել հիւանդին վայել հոգացողութեամբ: Բայց Հերիքնազը իրօք չէ նայում, լուռ է, անտրտունջ լռում... մարմինը տաք է...

— Ինչո՞ւ գնացիր... Ո՞ւր գնացիր...

Հարևանը բռնեց նրա ձեռքից և յիշեցրեց, որ պէտք է հոգալ և հանգուցեալին վերջին պարտքը տալ:

Սերոբը մեծ ճիգ գործ դնելով՝ թուլացած յենվեց Սոնայի ձեռքին: Ձայն չը հանեց: Սուսկալի՜ րոպէ: Սերոբը նորից ընկաւ թախտի ծայրին, նորից ճչաց.

— Հե-րիք-նազ...

Խոնաւ ու մութ անկիւններից անտարբերութիւնն ու մռայլութիւնն են միայն ուղարկում իրանց շունչը լի խաւարյոյզ սպառնալիքներով:

Ց. Սուլվեան

է ուղիղ, հաւասար և առանց ցենզի ընտրական իրաւունքի պահանջը, մի պահանջ, որ չի կարող չը համարվել Անդրկովկասի ժողովրդական իղձերի արտայայտութիւնը։

Մանրամասն և խղճմտօրէն պատմելով 1909 թ. խորհրդակցութիւնների յղացածն ու կատարածը՝ իշխ. Գ. Թումանեանը տրամաբանութեամբ է ճշտում, որ այնու ամենայնիւ գործնականապէս դեռ ոչինչ չի արված, որ դեռ եւս յայտնի չէ, թէ մօտիկ ապագայում Կովկասը կունենայ զեմստվօ թէ ոչ։ Այդ անյայտութիւնը, կառավարական շրջանների անբարեացակամ վերաբերմունքը նրան ստիպում են յայտարարելու, որ Կովկասը կարող է բաւարարվել նաև քչով, հէնց միայն 1890 թ. զեմստվօյի պարզ ներմուծումով։ Նա չէ մոռանում որպէս օգնական փաստ առաջ քաշելու և կովկասեան ժողովուրդների վերաբերմունքը դէպի ներկայ պատերազմը, մի վերաբերմունք, որ պէտք է ցրէ անջատողականութեան մասին եղած հէքիաթները։ Իշխ. Թումանեանը տրամաբանում է այսպէս. եթէ Կովկասը անձնուէր է Ռուսաստանին, ապա պէտք է նրան մասնակից անել պետութեան կենտրոնում եղած բարիքին։

Չենք կամենում ապարդիւն համարել խօսքի և համոզման ուժը, սակայն վերջին հաշւով դրանք չեն, որ պիտի զեմստվօ բերեն Անդրկովկասին։ Զեմստվօ ունենալու համար պէտք է շահագրգռել մեր ժողովրդական զանգուածներին և կոփելով նրանց ընձեռած ուժի վրա՝ ազդեցիկ անել մեր ծայրերկրի այդ պահանջը։

Բագու. Դ. Անանուն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ շնորհազարդ քահանայս՝ Եղնիկ ա. ք. Երզնկեան, Գէորգ ա. ք. Մեհրաբեան, Սարգիս ք. Երզնկեան։

—

Շնորհազարդ հայրեր.

«Մշակի» 13 յունիս № 126 թերթին մէջ ձիւ. ժողովներ հրաւիրելու առթիւ, գոգցես երեքնիդ ի միասին խօսք կապած, ըսած էք՝ «շնորհ բերել Վանքի աւագ եկեղեցին», «շնորհ բերել Բեթղեհէմի եկեղեցին», «շնորհ բերել ս. Մինաս եկեղեցին»։

Ես այնպէս գիտեմ—և այսպէս է արդէն—որ ժողովուրդը եկեղեցի կերթայ սրբասացութեանց միջոցաւ շնորհաբաշխումին մասնակցելու համար, ոչ թէ իր ներկայութեամբ եկեղեցւոյն շնորհ տանելու համար. «եկեղեցի շնորհ տանիլ»՝ գոնէ առնուազն ամբարշտական է։

Կը խնդրեմ, թարգմանեցէք ոևէ օտար լեզուի մէջ՝ «եկեղեցի շնորհ բերել», և առաւելկ խորթութիւնը աչքի պիտի զարնէ, վասնզի եկեղեցւոյ շնորհին արժանանալ կը հասկնամ, բայց եկեղեցիի հետ քաղաքավարութիւն չէ կարելի, քաղաքավարութիւնն ազատ պէտք է կիրարկել, ուրանօր շատ անգամ իր բացակայութեամբ կը փայլի։

Քաղցր է ինձ յուսալ, շնորհազարդ հայրեր, որ յետ այսօրիկ սոյն յանի կիրարկումը վերջ կը գտնէ ի մեզ։

Մնամ մեծարանօք՝ Խ. Ա. Սարաճեան

Թաւրիզ, 25 յունիս

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄ.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

(Սեփ. Թղթակցից)

Ուստր, 10 յունիս (ն. տ.)

Ամերիկայի Թեմակալ առաջնորդը Կովկաս ապաստանող փախստական - գաղթականներուն օգնութեան հետևեալ կոչն ուղղեց Միացեալ Պետութիւններու զանազան քաղաքները եպիսկոպոսական եկեղեցիներու հովիւներուն։

⁂

Գեր. տէր և եղբայր ի Քրիստոս.

Հայաստանի մեր դժբաղդ և երկար տարիներով տառապած ու ճնշուած ժողովուրդը՝ թշնամութիւններն սկսելէն ի վեր՝ կրկին անգամ ծայրայեղ թշուառութեանց ու անասելի ցաւերու ենթարկուած է։

Հայաստանը, Մօտաւոր Արևելքի Բելջիկան, ազգերու պատերազմաբեմը դարձած է, և ճիշդ այս պահուս ճակատագրական սոսկալի տագնապ մը կանցնէ, որովհետև ջարդերը և ամեն տեսակ հալածանքները նորէն երևան եկած են զօրաւոր թափով մը։

Հայերը լքելով իրենց օջախը՝ հազարներով կը գաղթեն դէպի Ռուսիա՝ Թիւրքական և քիւրդական վայրագութիւններէն ազատելու համար։

Հայ եկեղեցւոյ հոգևոր պետը՝ Նորին Սրբութիւն Գէորգ Ե. Կաթողիկոս Սուրէնեան՝ մեզի ուղղած իր կոնդակով Մայր Աթոռի շուրջը հաւաքուած անթիւ փախստական-գաղթականներու ողբալի վիճակը նկարագրելով՝ կը հրահանգէ մեզ դիմել ամերիկեան ժողովուրդի բարեսրտութեանը և քրիստոնէական զգացումներուն, օգնելու հազարաւոր որբևայրիներու և անչափահաս մանուկներու թշուառութիւնները մասամբ իւիք մեղմացնելու համար։

Մեր սոյն նամակով կը համարձակինք դիմել բոլոր մեր քոյր եկեղեցիներու պետերուն, հաւատացած ըլլալով թէ Հայաստանի ներկայ աղէտալի օրերուն դուք եւս յօժարակամօրէն պիտի ուզէք ընձեռել ձեր օգնութիւն հայ ցեղին մնացորդ բեկորներուն, այն յոյսով՝ թէ այս ներկայ արհաւիրքներէն ետք՝ մենք թերևս շուտով տեսնենք լաւագոյն օրեր պատմական ցեղի մը համար, որ շատ կանուխէն քրիստոնէութիւնն ընդունած և քրիստոնեայ քաղաքակրթութեան նշանակելի ծառայութիւններ մատուցած է։ Ձեր բարեսիրական զգացումները և մանաւանդ ձեր համակրութիւնը հանդէպ պատմական և հինաւուրց հայ եկեղեցւոյն՝ կը խրախուսէ մեզ դիմելու ձեր գերապատուութեան, որպէսզի եթէ կարելի է ու եթէ յարմար կը նկատէք—որուն վստահ ենք—դիմէք ձեր հօտին և ձեր եկեղեցիին մէջ օր մը հանգանակութիւն կատարէք ի նպաստ Հայաստանի հազարաւոր փախստական-գաղթականներուն և կարօտեալներուն, և արդիւնքը փոխադրէք ուղղակի Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին ի Էջմիածին, և կամ մեզի՝ իր տեղը հասցնելու համար։

Կը խնդրենք միանգամայն ձեր գերապատուութենէն աղօթել հայ ժողովուրդի փրկութեան համար, որ ներկայիս զինքը շըրջապատող զարհուրելի տառապանքէն ազատելով՝ կարենայ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ ազատօրէն տարածել, ուր երբեմն՝ դարեր առաջ՝ քրիստոնէութիւնը ծաղկեցաւ իր քրիստոնեայ կառավարիչներու իշխանութեան տակ։

Մնամք եղբայրական ողջոյններով՝
Ձերդ հաւատարմօրէն
Ա. Ծ. վ. Վեհունի
Առաջնորդ հայոց Ամերիկայի

⁂

Մէկ քանի տեղերէ ստացուած են նպաստաւոր պատասխաններ, որոնք կը յուսադրեն մեզ, թէ կոչին արձագանգ տուողներ պիտի գտնուին անտարակոյս։

Մաղաք Պ. Պէրպէրեան

ՀՆԴԿԱՀԱՅԵՐԻ ԿՈՉԸ ՅՕԳՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԻ

—

Կալկաթայում կազմակերպված Հայկական Նպաստամատոյց Ֆոնդի քարտուղար պ. Գաբրիէլ Յովհաննիսեանի ստորագրութեամբ մի կոչ է տպված յիշեալ քաղաքում հրատարակվող անգլիական „The Statesman“ շաբաթաթերթում, որից և թարգմանաբար առաջ ենք բերում կոչի մի քանի հատուածները.

«Ներկայ պատերազմը—ամենահսկայականը և ամենաաղէտալին աշխարհի տարեգրութիւնների մէջ—աննկարագրելի թշուառութիւնների իր բաժինը բերել է հայերին։ Թշնամութիւնների հէնց սկզբնաւորութիւնից՝ Թիւրքերի ձեռքով Հայաստանը վերածվել է կոտորածի մի դաշտի. զարհուրելի գազանութիւնները, որոնք կատարվել են անպաշտպան հայերի վրա, և սիրտ պատառոտող ողբերգութիւնները՝ խաղացված հայերի գլխին, չեն ենթարկվի մարդկային գրչի նկարագրութեան։ Ամբողջ քաղաքներ և գիւղեր ամայացված են հրով, և Կովկասին սահմանամերձ գաւառների ազգաբնակութիւնը ապաստան է որոնել Անդրկովկասում, ենթարկվելով յետոյ դժնդակ կլիմայի անհնելի դժուարութեանց, հիւանդութեանց աւերումների և հագնելիքի ու ուտելիքի պակասութեանց։ Լքված լինելու շնորհիւ՝ հարիւրաւոր անմեղ երեխաներ անհետացել են ճանապարհին և նոյնքան տղամարդիկ ու կանայք ցրտահար մեռել են՝ դիմանալ չը կարողանալով։ Ներկայումս շուրջ 100,000 անտուն ու անօգնական փախստական հայեր կան Կովկասում, որոնք խղճալի չքաւորութեան մէջ են, զուրկ՝ ապրուստի ամենատարրական պիտոյքներից։ Ռուսահայերը և սփիւռս աշխարհի ցրված նրանց հայրենակիցները տալիս են ինչ նպաստ որ կարող են, բայց նրանք չեն կարող գլուխ ելնել աղաղակող կարիքի և լայնատարած թշուառութեան հետ, որոնք կարօտ են ստիպողական և հրամայողական օգնութեան։

«Ամենաարժանաւոր մի դատի ստիպողական և հարկադրական հանգամանքներն ի նկատի առնելով, ես պաղատագին կոչ եմ անում, յանուն մարդկութեան և դառնապէս մարտիրոսված մի ցեղի, Հնդկաստանի նախաթոռ քաղաքի համակրելի հասարակութեան վեհանձնութեանը՝ տալու իրանց լուման Հայ Նպաստամատոյց Ֆոնդին՝ կազմակերպված Կալկաթայում, բարւօքելու տառապած ու վշտացեալ հայերի գժբաղդ վիճակը։

«Ոչ մի ազգ աշխարհիս երեսին չի տանջվել այնպէս, ինչպէս հայերը, որոնք դարերով հեծել են Թիւրքական ստրկութեան դառնադառն լծի տակ, չարչարվել են բռնութեան ճանկերում և ենթարկվել հալածանքի քրիստոնէական կրօնին և իրանց ազգայնութեանը հաւատարիմ մնալու և մշակոյթի ու քաղաքակրթութեան ձգտելու պատճառով։ Նրանք տանջվել և տանջվում են ամեն տեսակ իրաւազրկումներով, հալածանքներով, կոտորածներով և այդ բոլորը իրաւունքի և արդարութեան իղձերի համար, իղձեր, որոնք ազնիւ և հերոսական դաշնակիցներին ներշնչեցին զէնք առնել բարբարիզմի և միլիտարիզմի ներկայացուցիչների դէմ։ Հայերն եւս ջերմագին մասնակցում են ազատարար այս պատերազմին, նրանցից հազարաւորները կռւում են և արիւն թափում կողք-կողքի ռուսաց լեգէոնների հետ և բազմաքանակ կամաւորներ կազմել են առոյգ գումարտակներ և գործում են կից ռուս-կովկասեան բանակին։

«Ամենայջերմ յոյս ու հաւատ ունեմ, որ այս հոգեցունց կոչը սրտագին պատասխան կը գտնի և որ վեհանձն ու բարեսիրտ անդամները տարբեր համայնքների, ազդված՝ մարդասիրական զգացմունքներից, սիրով ու յօժար կը տան օգնող ձեռքեր։ Բոլոր նուէրները Հայկական Նպաստամատոյց Ֆոնդին շնորհակալութեամբ և երախտագիտութեամբ կը ընդունվեն գանձապահ Mr. A. Tephen-ի կողմից, 2, Camac str.»։

Ապա՝ պ. Գ. Յովհաննիսեան, որպէսզի մի աղօտ գաղափար տայ Թիւրք և քիւրդ հորդաների կողմից հայերի կրած սոսկալի բարբարոսութիւնների մասին, «Մշակից» քաղուածօրէն մէջ է բերում մի հատուած, ուր ռելիէֆ կերպով դուրս են բերված Թիւրքերի ու քիւրդերի կատարած նախճիրները Սալմաստի շրջանում՝ այս տարվայ մարտի 5-ին ռուսական գնդերի Սալմաստ հասնելուց առաջ։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Յունիս 8 ին (ն. տ.) Բինգհըմթընի (Ամերիկայի Միացեալ Պետութիւններ) բարձրագոյն վարժարանէն ընթացաւարտեցին 14 աշակերտներ։ Կարգին ամենէն յառաջադէմը ծանուցուեցաւ օր. Եղիսաբէթ Տարագ։ Առաջին անգամն է, որ վարժարանի շրջանաւարտ կարգին առաջինը օրիորդ մը կըլլայ, և հայուհի մըն է աս առաջին աշակերտուհին։ Օր. Տարագ բանախօսեց «Բանտարկեալ աշխատաւորներ» նիւթին վրայ ձեռնահաս հմտութեամբ և ընտիր անգլիերէնով։ («Նոր Կեանք»)

◆ Աղեքսանդրիոյ (Եգիպտոս) մէջ հրատարակուիլ սկսաւ «Արև» անուն երկօրեայ թերթ մը խմբագրութեամբ Վահան Թէքէեանի։ Արտօնատէրն է անոր՝ Լևոն Մկրտիչեան, իսկ աշխատակիցներուն մէջ կը գտնենք հետևեալ ծանօթ անունները՝ Տիգրան Կամսարական, Միքայէլ Կիւրճեան, Վահան Մալէզեան, Միհրան Պէկեան, Ս. Սապահգիւլեան, Գրիգոր Սարգիսեան (Թղթակից «Թան» լրագրի), Յովհաննէս Սէթեան և Միհրան Տամատեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Ղազվին, 1 յուլիսի

Պատմական ծանր օրերումն էր ապրում Պարսկաստանը անցեալ ամիսը։ Անակնկալների այս հայրենիքը յանկարծ այնպիսի մի անսպասելի երևոյթ ստեղծեց, որ շատ դիպլօմատներ չէին կարող առաջացնել և զարմացնել աշխարհին իրանց ընդունակութեամբ, ինչ որ ստեղծվեց ինքնաբերաբար և պատճառ դարձաւ գերմանական դաւերի գէթ երկար ժամանակեայ կործանման։

Գերմանացիք, որ Թիւրքերի ձեռքով աշխատում էին պատերազմաբեմ հանել պարսիկներին կրօնական հողի վրա, ի լուր աշխարհի ապուշ կտրեցին, երբ Քիրմանշահի քիւրդական անջատեալ ցեղերը միանալով յանկարծակիի բերին օսմ. այն զօրամասին, որ Ռէուֆ-բէյի հրամանատարութեամբ 5 ամսից ի վեր աշխատում էր հեծեալ ցեղերին բռնի կերպով միացնել իր զօրամասին և առաջ շարժվել գրաւելու երկրի սիրտը և պատերազմ յայտարարել տալու Պարսկաստանին ընդդէմ Ռուսաստանի և Անգլիայի։

Քիրմանշահի լեռներում թառած քիւրդական քաջարի ցեղերի ցեղապետները, լաւ հասկանալով գերմանացիների ձեռքին գործիք դարձած օսմ. զօրամասի կեղծիքները, միանալով պարզ լեզուով խօսեցին նրանց հետ, առաջարկելով պատգամաւորների բերանով՝ որ թողնեն իրանց հողերը, բայց Ռէուֆ-բէյը բանտելով պատգամաւորներից մի քանիսին գնդակահար արեց, որից յետոյ զայրացած ցեղերը կարճ ժամանակում շրջապատեցին Հարունաբադում օսմ. զօրամասին, փառաւորապէս ջարդեցին և նոյն իսկ խլեցին նրա թնդանօթներից. բայց դժբաղդաբար սկսված պատերազմական գործողութիւնները դադար առան կենտրոնական կառավարութեան հրամանով։

Առ այժմ չէզոքութիւնը պահպանելու տակ՝ քիւրդական ցեղերը չը շարունակեցին սկսված կռիւը, բայց իրանց բռնած դիրքի շնորհիւ, ստիպեցին օսմ. զօրքերին քաշվել դէպի սահմանը և ապացուցեցին այն հակամարտութիւնները, որոնք գոյութիւն ունեն թէ աշխարհիկ և թէ կրօնական հողի վրա այս երկու հարևան պետութիւնների միջև, որոնց սակայն վերացնելու միջնորդի դերն է ստանձնել գերմանական կառավարութիւնը, որը այս եղելութիւնից յետոյ սուսիկ-փուսիկ հաւաքեց իր աճպարարութեան կծիկը, սպասելով նորանոր հանգամանքների ստեղծման, որոնց շնորհիւ նորից պիտի սկսէ իր դաւերը։

Քիրմանշահի շուրջը եղած կռիւներից յետոյ՝ այժմ հաշտութիւն է տեղի ունեցել և օսմ. զօրքը հեռացել է դէպի սահման։

Քիրմանշահի դէպքերը առաջ բերին Թեհրանի կառավարութեան մէջ ճգնաժամ։ Դեմօկրատ կուսակցութեան՝ մէջլիսի մէջ ունեցած պատգամաւորները Մէջլիսում մեղադրեցին ներքին գործերի մինիստր Ֆէրման-Ֆէրմանին՝ որպէս միակ հեղինակի, Թիւրք-պարսկական Քիրմանշահեան ընդհարումների և հետևապէս չէզոքութեան խախտման։

Անշուշտ դեմօկրատները այն լեզուով չէին խօսի, եթէ նոյնպիսի մի ցեղ՝ փոխանակ Թիւրքերի՝ ռուսների դէմ զէնք բարձրացնէր։

Երբ Սօվուջ-Բուլաղի քիւրդերը դէպի Թաւրիզ՝ ռուսաց զօրքերի վրա էին արշաւում, ոչ մի դեմօկրատ լեզու այն ժամանակ և ոչ մի խօսք չարտասանեց, որ այն քիւրդերը խախտեցին չէզոքութիւնը և ոչ իսկ Մուստօֆի-էլ-Մամալիքի կաբինէտը յանդիմանութեան արժանացաւ։ Պարզ է, որ դեմօկրատ կուսակցութիւնը ոչ թէ չէզոքութիւնը խախտելուն համար Ֆարման-Ֆարմանին մեղադրում է, այլ նրա համար՝ որ յիշեալը համարվում է ռուսասէր։ Եւ այս բաւական է պարզապէս հասկանալու, որ այս նորելուկ դեմօկրատները ցանկանում են բարեկամական կապ պահպանել Թիւրքերի հետ, հակադրելու համար հովանաւորող երկու մեծ կառավարութիւններին։

Գումարված մէջլիսի արտակարգ նիստում մինիստրական ամբողջ կազմը՝ ներկայանալով՝ տուեց իր բացատրութիւնը Քիրմանշահի դէպքերի մասին. իսկ Ֆարման-Ֆարմանը հրապարակով պահանջեց երևան հանել այն հեռագրական կամ գրաւոր դօկումենտները, որոնց անունից խօսում են իրան մեղադրողները, այն ժամանակ ինքը ամենափոքր պատիժը կը կրէ՝ կախաղան բարձրանալով։ Սակայն մինչև վերջն էլ հրապարակ դուրս չեկան այն յիշեալ դօկումենտները, որոնցով որպէս թէ ներքին գործերի մինիստր Ֆարման-Ֆարմանը հրամայել է յիշեալ քիւրդ ցեղերին կռւել օսմ. զօրքերի դէմ։ Իսկ այդպիսի դօկումենտ չը կարողանալով հանել՝ առանց խղճահարվելու պահանջեցին մինիստր նախագահից, որպէսզի Ֆարման-Ֆարմանին հրաժարեցնի. բայց մինիստրների նախագահ Էյն-ուդ-Դօվլէն յայտարարեց մէջլիսին, որ եթէ իրօք յանցանքը հաստատվի, այդ դէպքում մեղաւոր կը նկատվի ոչ միայն Ֆարման Ֆարմանը, այլև ամբողջ կաբինէտը, որովհետև ամեն ինչ իրանց մէջ միաձայնութեամբ կամ ձայների մեծամասնութեամբ է գործադրվել և ոչ մէկը միւսից անկախ չէ գործել։ Այս յայտարարութիւնից յետոյ, որովհետև մէջլիսի մեծամասնութեան ցանկութիւնն էր Ֆարման-Ֆարմանին պաշտօնից արձակել և որովհետև ամբողջ մինիստրները դրա մէջ գտնում էին լոկ անձնական և ոչ սկզբունքային հակառակութիւն, ամբողջ կազմով հրաժարական մատուցին Թագաւորին։ Թագաւորը չընդունեց սրանց հրաժարականը, մէջլիսը յամառեց, և ամբողջ 20 օր ձգձգվելուց յետոյ ճգնաժամը վերջացնելու համար Թագաւորը ընդունեց Էյն-ուդ-Դօվլէի կաբինէտի հրաժարականը, որը այս մէջլիսի օրով դառնում է 5-րդ տապալված մինիստրութիւնը 5 ամսվայ ընթացքում։

Նոր կաբինէտը անշուշտ կը կազմվի, բայց դժուար թէ կարողանան իրանց նախկին կաբինէտի չափ խոհեմ գործունէութեան ձեռնարկել, որով ապահովել կարողանային ալեկոծեալ Պարսկաստանը։

Ս. Յովեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹՆԴԱՆՕԹԱՅԻՆ ԱՐՔԱՆ

—

Վերջերս Վիլհէլմ կայսրը շարունակ խորհրդակցում է Էսսէնի հսկայական գործարանների տէր Կրուպպ ֆօն-Բօլէնի հետ։ Կարծում են, որ կայզերը և «թնդանօթային արքան» խորհրդակցում են այսպէս կոչված «մետաղի ճգնաժամի» առիթով, որ օրէցօր պարզ կերպարանք է ստանում։

Այժմ Կրուպպ ֆօն-Բօլէնը առաջին մարդն է—Վիլհէլմից յետոյ—Գերմանիայում։ Գերմանացիք մեծամեծ յոյսեր են դնում նրա վրա՝ նորանոր անհնելի թնդանօթներ սպասելով նրա գործարաններից։

Հետաքրքրութիւնից զուրկ չէ այդ մարդու կենսագրութիւնը, որ պատահմամբ արդիւնաբերութեան մի ամբողջ ճիւղի հրամայողը և տասնեակ հազար բանւորներ աշխատացնող դարձաւ։ Կրուպպ ֆօն-Բօլէնը ծնվեց Գալբախ համեստ պաշտօնեայի ընտանիքում։ Երիտասարդ ժամանակ նա ծառայութեան մտաւ արտաքին գործերի մինիստրութեան մէջ։ Ապրելով բացառապէս իր համեստ ռոճիկով, նա ի հարկէ յոյս չէր դնում մեծ կարիէրայի վրա։ Սակայն հակառակ սպասուածի, բախտը ժպտաց նրան։ Մի քանի տարի յետոյ նա նշանակվեց երկրորդական դեսպանատներից մէկի քարտուղար և ստացաւ ազնուականի կոչում։ Յայտնի չէ ինչու—ինքը Վիլհէլմը մասնակցեց երիտասարդ դիպլօմատի բախտում։ 1906 թ. Վիլհէլմը խնամախօսի դեր յանձն առաւ և խնդրեց Էսսէնի գործարանների տէր Ալֆրէդ Կրուպպի միակ աղջկա՝ Բէրտայի ձեռքը Գալբախի համար։ Կրուպպը չը հակառակեց այդ պսակին, մանաւանդ որ նրա աղջիկը քնքոյշ զգացմունքներ էր տածում դէպի Գալբախը։

Շուտով Ալֆրէդ Կրուպպը մեկնեց Կապրի կղզին, երկիւղ կրելով իր հոմօսէկսուալ արկածների մերկացումներից։ Գալբախը, դառնալով Էսսէնի գործարանների միակ տէրը, իր անունը փոխեց «Կրուպպ ֆօն-Բօլէն»։ Ներկայումս նրա կարողութիւնը հաշւում են 600 միլիօն մարկ։ Նա զինւորական կուսակցութեան աչքի ընկնող անդամներից է և գիտակցաբար պատրաստում էր հող զինված ընդհարման համար Ֆրանսիայի և Ռուսաստանի դէմ։

Ժամանակաւոր խմբագիր՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերարուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—115

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զարչուլի հայոց եկ.-ծխ. միդասեան (երեքբաժ.) դպրոցի համար հարկաւոր է փորձված
ՈՒՍՈՒՑԻՉ,
որը աւանդելու է ըստ ծրագրի բոլոր առարկաները բացի ռուսերէնից, և պատրաստելու է եկեղց. երգեցիկ խումբ։ Տրվում է 700 ր. ռոճիկ և դպրոցին կից մի սենեակ առանց վառելիքի։ Ուղարկել վկայականների պատճէնները, յիշելով՝ որտեղ են պաշտօնավարել։
Դիմել հոգաբ. նախագահ՝
Գրիգոր ք. Տէր-Գրիգորեանցին
452. 3—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1)	ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2)	ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3)	ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4)	ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5)	ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6)	ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7)	ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8)	ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9)	ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10)	ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11)	ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12)	ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ Մ.-ի		15 կ.
13)	ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14)	ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15)	ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16)	ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17)	ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլէրի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18)	ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՁԱՐԸ, Աւ. Եզեկեանի.		15 կ.
19)	ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20)	ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի		20 կ.
21)	ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի.		25 կ.
22)	ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի		20 կ.
23)	ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբէնեանցի		10 կ.
24)	ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զէնեցի		3 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%։ (6) 0—6

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.